

پاکستان-قلمی  
Vost-Nam

蔡天新  
幽居之歌

詩歌和散文

亞美尼亞版



遠洲傳播出版社  
China Intercontinental Press

Cai Tianxin  
**Song of the quiet life**

Poems and essays  
/Armenian version/

Stepanakert 2015

Քայլ ՏՅԱՆՍԻՆ

# ԽԱՂԱՂ ԿՅԱՆՔԻ ԵՐԳԸ

Բանաստեղծություններ եւ էսսեներ

Թարգմանությունները՝  
Լիլիթ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2015

ՀՏԳ 821.581-1Տյանսին

ԳՄԴ 84(5Չ)-5

«Գեդարմ» հանդեսի մատենաշար

Տ 702

Խմբագիր՝ Հրանտ ԱԼԵԿՍԱՆՅԱՆ

**Քայ Տյանսին**

S 702 **Խաղաղ կյանքի երգը:** Բանաստեղծություններ:  
Թարգմանություններ անգլերենից՝ Լ. Ղազարյան:  
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2015, 116 էջ:

Քայ Տյանսինը ժամանակակից չինացի բանաստեղծների այն սերնդից է, ով պոեզիայի աշխարհ է մուտք գործել մաքեմատիկայի ասպարեզից: Եվ արդի չինական պոեզիայում նա հաստատվել է իր վառ տաղանդով՝ շաղախված ճշմարիտ քնարականությամբ, պատկերավոր ուրույն խոսքի եւ հուզականության տպավորիչ համադրություններով: Նրա քերթվածները չինական դասական պոեզիայի եւ արդի բանաստեղծակերտումի մի գեղեցիկ ձուլվածք են, որոնց հայերեն փոխադրությունը մեր ընթերցողներին հնարավորություն կտա զգալու ճենաց աշխարհի նոր բանաստեղծության առինքնող շունչը:

ISBN 978-9939-1-0283-2


ՀՏԳ 821.581-1Տյանսին

ԳՄԴ 84(5Չ)-5

© China Intercontinental Press 2015

© Cai Tianxin 2015, Armenian Edition

© «Ոգի-Նաիրի»/թարգմանության համար/



**I**

**ԱՇԽԱՐՏԻ ՕՎԿԻԱՆՈՍՈՒՄ**

1

Լողում ենք մենք օվկիանոսում աշխարհի  
ցերեկը կիսով չափ ջրում ընկղմված  
գիշերը ճոճվում ենք մակերեսին

2

Ի՞նչ է երեւում պարզգամբից  
գարուն, որ լողալով մոտենում է մյուս  
նավահանգստին -  
այսպեղ-այնպեղ հաճախ փոխելով ընթացքը

3

Կամուրջն այսպեղ ամուր է կանգնած  
սպիրակ առագաստը, կարմիր առագաստը  
բախվում են նրան եւ մթության մեջ ծվեն-ծվեն լինում

4

Լողում ենք մենք օվկիանոսում աշխարհի  
հանց առինքնող մահվան դրոշակ  
անհասանելի կայմի գագաթին

*Նանչժու, 1991*

**ԱՐԵՎԻ ԼՈՒՅՍԸ**

Արեւը մանգո է:

Կտրած-բացած՝ նա ցերեկ է վառ:

Առանց կտրելու՝ գիշեր է մթագին:

Մենք կույ ենք փալիս լույսը արեւի՝

Զորացնելու մկանները մեր:

Քնած ժամանակ

Արեւի լույսը հոսում է եռուն մեր արյան միջով՝

Ճանապարհ ընկնում դեպի մեր մարմին:

Ու այդ ընթացքում նա հանդիպում է

Արեւի լույսի մի այլ կտորի:

*Նանչժոու, 1989*

**ԵՐԲ ԱՄԱՌԸ ՆԱՀԱՆՋՈՒՄ Է ԴԵՊԻ ՆԱՐԱՎ**

Երբ ամառը նահանջում է դեպի հարավ՝  
ափեզրի երկայնքով լռիկ թափառելու,  
աշունն է գալիս պահը որսալով՝  
փութալով հագեցնել դաշտերը կիզված:  
Օվկիանոսից քաղցր մի երգ եմ լսում՝  
Անուշիկ ձայնը հին սիրահարի:  
Խութին նստելով՝ նա շորն է հանում,  
մինչ մի ականջով համակված լսում  
եւ ինձ գլխավոր դեր եմ վստահում:

*Նանչժու, 1992*



**ՇՐՋԱՊՏՈՒՅՑ**

Դեմքով արեւելք  
արեւմուտք քթով

Ձեռնափը  
Ասես փանիքասալիկ հերհարվածում է

Եղունգներն են սողում  
արյունն անոթներով գեպնին է ողում

Ու ես փռվում եմ  
սուզվում գեպի մեջ

Ու վայրկենապես վերահայրնվում եմ  
լեռան կարարին:

*Նսնչժուռ, 1990*

**ԲԱՐՁՈՒՆՔԻՑ**

Բարձունքից  
դուք կտեսնեք  
ամբոխներ, որ նման են ավազի հատիկների  
միասին կիտված,-  
ամեն ինչ շատ թե քիչ նույնն է:

Բարձունքից  
դուք կտեսնեք  
փներ, որ նման են անշարժ ծովախեցիների  
վերեւ կամ ներքեւ նայելով  
հազիվ ինչ-որ բան տարբերես:

Բարձունքից  
դուք կտեսնեք  
խաղաղվող մի քաղաք,  
ուր բնակիչներն աճապարում են  
դեպի լեփ-լեցուն ճեպընթացներ:

*Նանչժուու, 1988*

## **ԲԱԺԱՆՈՒՄ**

Լուսնալույսը բաժանում է շինության գագաթները  
եռանկյունաձև ուրվագծերի  
շրջանակները եւ աղեղների ուրվագծերը

բաժանում են սոսիների ճյուղերն ու փերեւները  
թռչունների ճախրող ուրվագծերին  
եւ փեպուրների ուրվագծերին

անձայրածիր ծովը նույնպես բաժանված է  
ինչպես մեր փխրուն հոգիները-  
սակայն ո՛վ է երբեւէ փեսել նրանց

*Նանչժու, 1992*

**ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ ԶԿԱՆ ՄԱՍԻՆ**

Ես սիրում եմ ավտոմեքենաների մասին  
մտածել որպես բառերի:  
Նեշտ է բառերի արմատները փոխել:  
Օրինակ՝ մեքենայով շրջադարձ արա  
եւ կհայրնաբերես մի ածական:  
Մարդիկ ավտոմայրուղուն իրար են բախվում  
Երբեմն սրեղծելով կատարելագույն նոր  
նախադասություններ:  
Եթե մեքենայով ընթանալիս լինես Խաղաղ  
օվկիանոսի ափեզերքով  
Զուրը կհմանա՝ ինչպես թարմացնի քո մեքենան:  
Երբ դուրս լողաս սուզված մեքենայից -  
Մտքովդ կանցնի ձկան մասին մի  
բանասպրեղծություն:

*Կալիֆորնիա, 1993*

**ԾԱՌԵՐՆ ՈՒ ՇՆԵՐԸ**

Ծառերն ու շները կհետևեն քեզ անկախ նրանից  
գնում ես հեռու մի եզերք կամ թե հարեւանի փուն  
քո դեմ փակելով արեւի լույսը եւ քամավելով  
ոտքերիդ նրանք  
գեպնին են թողնում իրենց սրվերները

Մակայն դու սրիպված ես հստակ ճանաչել  
նրանց ազդանշաններն ու փարբերակել  
նրանց տեսակները  
եւ սովորել՝ ինչպես են ցողն ու փոշին  
նստում տերեւներին ու փարթամ մորթու վրա

Խոշոր ինքնաթիռների համեմատությամբ  
նրանք առավել հուսալի ընկերներ են  
անգամ երբ կարմիր լուսինն է ելնում անհունն ի վեր  
նրանք վախ չունեն ու չեն ճողոպրում:

*Nassjo, 2005*

**ԼՃԻ ԶՈՒՐԸ**

Նողը լճի ջրի լայնեղ փարածք է  
Երկինքը լճի ջրի արձակ փարածք է  
Քաղաքը լճի ջրի հսկա փարածք է  
Տունը լճի ջրի լայնշի փարածք է

Պապը ուղղաձիգ լճի ջուր է ամուր  
Աթոռը ճոճվող լճի ջուր է նիրհուն  
Թեյի բաժակը լճի ջուր է ողորկ  
Սրբիչը կախված լճի ջուր է փափուկ

Արեւաշողը թափանցիկ լճի ջուր  
Երաժշտությունը հոսող լճի ջուր  
Սերը փոխադարձ զգացմունք լճի ջուր  
Երազանքը հեքիաթային լճի ջուր

*Չիկագո-Տոթոնարո, 1994*

**ԻՆՉՊԵՍ ԽՆԴՐԵԼ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԿԱՆԳ ԱՌՆԵԼ**

Ինչպես խնդրել ժամանակին կանգ առնել  
հեռվից նոր եկած ընդանիքի պես  
սակայն ոչ քամուց քշված փերեի:

Ինչպես հաբու կարել անցնող ժամանակը  
կանաչ խոտի պես, որ որոճվում է  
երախում գազանի:

Ինչպես արթնացնել ժամանակն աշխարհում  
մինչ նա մեր բացված աչքերում փեսնի  
ռիթմայնություն, որն աճում է պարի:

Ինչպես կանգնեցնել ժամանակն ամբիոնում  
սփիպելով նրան ճառ արտասանել  
եւ դառնալ մեր նոր ղեկավարը:

*Նանչժուու, 1992*

**ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՊՐԵԼՈՒ ԵՐԱԶԱՆՔԸ**

Ճյուղերին աճում են ամպեր ու կապույտ:  
Թռչուններն անհամբեր առ աչքերս են թելում:

Լանդշաֆտն ու ծուխը ծավալվում են խաղաղ  
փների վրայով  
Գետերը խայտում են թելերիս փակ:

Լուսինը կապույտ շափյուղա է  
Մաքանու մեջ դրված:

Ես կանգնած եմ ականջի խորխորապում -  
Երագում եմ ապրել այս աշխարհում:

*Նանչժոու, 1990*





**II**

**ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ**

Անմեղ  
մի էակ

ծովափի  
ավազին  
պառկած

վարսերը նրա  
ճերմակ ամպերով  
կապած

ամենը  
կույ է գնում  
անքուն ծովին

*Նաևժոռու, 1989*

**ԾԱՂԻԿ**

Մարմինը նրա՝ ծաղիկ անանուն  
որ փթթելով ելնում է որպես փյունիկ  
գլուխը նրա վարսանդի պես է  
որ ձգվում է ճերմակ պարանոցից  
մի ծաղիկ որը խայտում-լողում է  
ծովի սպիտակաբաշ ալիքների նման  
մի ծաղիկ որը հայտնվում է մարդկանց  
-մի դեղին ծաղիկ, մի կարմիր ծաղիկ-  
նրա սլացիկ ազդրերն ասես ծաղկե փապար լինեն՝  
նեփված հողագնդին:

*Նանչժու, 1990*

**ՄԵՐԿ**

Պոեզիան համակում է ինձ:  
Նրա ձիգ ձեռքերը գիշերն ի բուն  
Սավառնել են իմ գլխավերեւում:  
Նեռավոր մի ծով՝ աղի ու սեւ:

Ռիթմը լողում է կարարից կարար:  
Մի հիշողություն ապակե ամռանից:  
Ինքս պարփակված իմ էության մեջ  
նման եմ միաձույլ զույգ սիրահարի:

*Սան-Ֆրանցիսկո-Մոնրեռեյ, 1993*

**ՄՏՔԵՐԻՍ ԳԵՏԸ**

Միրում եմ քո առջեւ խոնարհ կանգնել ու  
թողնել՝ ճակատիդ առինքնող լույսը  
փայլի մտքերիս հորդ գեպի վրա

Քո փարթամ վարսերը  
գեպի վրա ցրվում են հանց գյուղակներ  
որոնց բույրը լողում է քամու թեւին

Երբ քեզ ավելի եմ մոտենում ապա  
քո քթի փոքրիկ նավակը մեկեն  
սրընթաց հեռանում է:

*Նսնչժուռ, 1991*

## ՆՍՏԱՐԱՆԸ

Մի անգամ երկար նստարանին նստած ինչիմ  
զգացմունք ինձ համակեց  
ձեռքս հանգստանում էր մի փոքր կարմիր  
ժիլեպի վրա

Այժմ միայնակ նստած եմ Միջերկրական ծովի ափին  
նայում եմ հեռուն՝ ջրաշխարհին կապույտ

Այս հանգստությունն արեւի լույսը չի արտացոլում  
երբեմն թեքում եմ գլուխս եւ փեսնում նրա երկար ու  
արձակ վարսերը

Նա ձայն չի հանում: Նրա դեմքն ասես թաղված է խոր  
սպիտակ ակացիայի խիտ սաղարթի մեջ:

*Բեյրութ, 2004*

## **ԿԱՆԱԶ ՔԱՄԻ**

Ձեփյուռ է փչում շինությունների ոլորուն կիրճով  
անցնում լուսամուրագոգի ծաղկամանի մոտով  
քշում-փանում է փնային ծաղկի բոլոր տերեւները  
քշում է մի այլ ծաղկի ծաղկաթերթերն այնպես,  
որ մնում են միայն տերեւները -  
քամին հասնում է մի կնոջ փրփում-փխրամած դեմքին  
ում աչքերից երեւում է, որ նա մտաւայդ է  
քամին նրբորեն արձակում է նրա համեստ հագուստը  
լցնելով այն եւս մի կտրիկ կրծքով  
քամու ծանրությունն ընկած է կնոջ  
մարմնի բոլորքում:

*Մասնագիր, 1989*

**ԼՈՏՈՄԻ ԼԻՃԸ**

Մի անգամ Լոպոս լճում թիավարելիս՝ րեսա  
ջահել մի կնոջ՝ ափի մոտ, մարքերի մեջ սուզված,  
կոճակները փայլվելում էին նրա ամառային  
զգեստի վրա:

Նավարկելով մոտիկ՝ նրան հրավիրեցի ինձ միանալ:

Նախ, ես ապշահար նայում էի նրան,  
հեղո նա ժպտաց:

Մթնաշաղը պարուրեց մեզ, փոքրացնելով  
մեր միջեւ փարածությունը. նուրբ գեղեցիկ  
մի պուտիկ՝

գրքից ավելի մոտ, ասպղից շապ հեռու:

*Xiamen, 1992*





**ԴԵՍՔԱՐՏԵՍ**

Ինչպես Դե Վեգասը Իսպանիայում  
ինչպես որ հազարամյա ամա կղզին  
նա ծնվել էր սննկացող մի ազնվական ընտանիքում

Ինչպես ծովի մակերևույթն է հանգիստ բարձրանում  
թաքցնելով իր մենության շառավիղները  
այդպես նա անհանգիստ գգայուն ու էքսցենտրիկ էր

Նա սպասում էր որ թագուհի Քրիստինան  
իր երեխոց նավ ու ակնարկ կուղարկի  
եւ նա կարող էր իր ջերմ հոգին նրան  
իզուր առաջարկել:

*Կալիֆորնիա, 1994*

**ԳԻՇԵՐԱՅԻՆ ՆԱՎԱԿԸ**

1

Կարարյալ հանգիստ նստած է նա  
ձեռքերը ծալած  
հավասարասրուն քառակողմ անխոս  
գայթակղելով ասես հանելուկ

2

Երբ բարձրացնում է նա իր գլուխը  
աչքերը նրա շագանակագույն վարսերի փակից  
ասես երկու թարմ խաղողահափիկներ  
լինեն ցանկալի  
ես վայելում եմ դրանք անկշարում

3

Գեղեցիկ ոտքը նրա ձգվում է  
անշարժ ու լռիկ ճոճանակ ինչպես  
ծովի ալիքներն ահագնանում են  
ես իմ քունն ահա եթերանում է

4

Ժպտում է նա նուրբ հայացք-հմայքով  
ի ցույց դնելով արամներն իր  
ասես ճերմակ նուռ  
օդում բացված:

*Էգեյան ծով, 1999*

**ԱՐՁԱԳԱՆՔ**

Եթե մրաձում ես  
եթե մրաձում ես  
մի օր այս փունը  
կփլփի  
կփլփի  
մեր պարմությունը  
այժմ այժմ  
կավարպի կավարպի  
դու ես դու ես ես  
ասես նորովի ասես նորովի  
կսկսենք ապրել  
կսկսենք ապրել  
դու սխավում ես  
դու սխավում ես

*Նանչժու, 1990*



**III**

**ԹՎՓԱՌՈՒՄ**

Շրջում եմ ես մարդկանց գունագեղ ծովով  
ասես մի րերեւ անտառային հոսքում

Ամեն ինչ ջրի մեջ է, ամեն ինչ ջրի մեջ է  
Ժամանակն էլ է շրջվել նավաքթի պես

ոլոր երթուղով նավարկելու պահին  
գեղափին երեսում է սպիտակասյուն մի րուն

ճախրող աղավնին հատում է երկնքի լագուր անդորրը  
հեռվում կարմրամանուշակագույն  
լեռներն են հառնում

*Կալիֆորնիա, 1993*

### ՆԱԴԻՐՅԱՆ ՃԱՆՊԱՐՆԸ

Մի անգամ ճամփորդել եմ այս ճանապարհով  
դեռեւս պարզորոշ մտաբերում եմ ճոխ տեսարանը-  
թունելը, հոսանքը, խաղողի այգին:

Երկաթուղին երկար հերթեր ունի  
ուղեւորները ելումուտ են անում անդադար  
միայն այս օրերին նրանցից շատերն  
անգլերեն են խոսում:

Ապենինյան անձրեւը շեղակի թափվում է  
պարուհանների  
եւ ժամանակը ծխնելույզի ծխի պես լողում է վեր  
միայն քամին է այն ետ քշում:

Ամեն ինչ պարահում է միայն մի անգամ -  
եթե հանդիպես հին սիրահարին  
նրան լավ հարգիր որպես հիշողություն:

*Նոմ-Ֆլորենցիա, 2005*

**ՆԻԱԳԱՐԱ ՋՐՎԵԺԸ**

Կապույտի, սպիտակի վերելում:  
Շրջապարված կապույտ, սպիտակ երանգներով  
ասես մահ լինի, որ թափառում է պարտանքների մեջ:

Թռչուններ, որոնց փետուրներն զրոսաշրջիկների  
մազերից շար են:  
Ինչպես երբեմնի սիրահարների շուրթերը,  
թռչունների կտուցները  
համբուրում են անձրեի վարագույրը:

Լիցքաթափված դեն եմ նետում  
անուններն այդ ջրի սառնության մեջ:  
Դուրս են ելնում կրկին,  
քանի որ գիշերն է մութենում լուռ:

Գունապ արեւն է դողում: Մեկ քայլ`  
մահվանն ավելի մութ: Բյուր սառը ձեռքեր  
խոզանակում են իմ պաղ ծոծրակը:

*Նյու-Յորք - Օկտտրիո, 1994*



## **ՉԵՆԱՅԱՅԻ ԱԼԻՔԸ**

Առանց ավազի ժամացույցի  
ես օգտագործում եմ դողը թարթիչներիս  
ես ագռավի սեւգույն փետուրները  
ճիշտ ժամանակը ասելու համար

Երբեմնի կապույտ երկինքը  
այժմ պարված է  
նարգիզի բուրյան ծաղիկներով  
ես կնճիթներով ձեր փղերի

Մենք խաղում ենք չինական շաշկի  
մինչդեռ Շիվան դարձյալ  
նաբաժ է ուղիղ  
փաճարի ներսում

Զեփյուռ Բենգալյան ծոցի վրա  
մուգ մազի խոպոպը  
բարձրանում է ահա  
Չենայայի ալիքից:

*Bangalore, 2003*

**ԱՐՄԱՎԵՆԻՆԵՐԸ**

Ծառաբներ բարձր ու ուղղահայց  
տներ կառուցելու համար  
Ճյուղեր ու երկար տերեւներ  
փանիքներ պարարաստելու համար

Պարզի գույն  
որ մոխրագույնից փոխվում է կարմրի  
ապա մանուշակագույն կամ սեւ է դառնում  
անասուններին կերակրելու համար

Ճանապարհից վերեւ խոտածածկ մի հոր  
թակարդներ ու պահոցներ անձրեւաջրերի  
Նգոր բանակը պաշտպանում է հպարտ  
ծայրահեղ աղքատ մի երկիր

*La Habana, 2000*

**ՊԱՅԹ-ՅՈՒՆ**

Օդը հրում է օդը դեպի առաջ  
մեղմորեն կուտակած ուժով  
կամացույց զգույշ անվարան  
մարդիկ միանգամից դրախտ մտան

Արթնանում եմ քնից փխուր ու անհանգիստ  
բացում դարպասը շենքի փանիք փանող  
փեմում եմ հիասքանչ գարնան մի առավոտ՝  
սպասելով իր ժամին, որ օդի պես խուժի  
փնտրից ներս:

*Մեղեկին, 2000*

**ԷԼԲՐՈՒՄ ԼԵՌԸ**

Դեպի վեր հառնելով  
լեռները կասեցնում են Անդրկովկասից  
ներթափանցող ցուրպը  
եւ ձկներին եկող Կասպից ծովի

Սվեն Նեդինը մտրակահարվածներով  
մի անգամ ձիով ճեղքեց ու անցավ  
Սկանդինավյան խաբաշունչ պարզության միջով

Իսփված մի հին կնիք  
երկնքի նամակում՝  
ճամփորդների մկրատով կտրվելու պատրաստ:

*Թեհրան, 2004*

**ՔԱՐԱԿ ՇԻՌ**

Իսպահանի համեստ պանդոկի պարտեզում  
շապրվանից խոխոջող ջրի բարակ մի շիթ  
կիսում է իմ բարձը ամբողջ գիշեր

Երկու հոլանդացի աղջիկների ծայներն  
անէանում են հարեւան սենյակում  
հանց գեպեր լինեն Իրանի լայնեղ  
բարձրավանդակում

Նսկա արմավենին պապուհանից դուրս  
գիշերվա մեջ ասես պայծառ լուսնկա է  
որ շողում է խաղաղ շապրվանի վրա

*Իսպահան, 2004*

**ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅՈՒՆ**

Գոնգը հարվածային գործիք է, սակայն բերքի  
սեզոնին այն չի կիրառվում  
կարճ ժամկետով վերնաշապիկով մի դաշնակահար  
թափահարում է իր ճկուն ձեռքը  
ունկնդիրների ուշադրությանն արժանանալով  
հաղորդավարը խոսում է չափավոր փոփոխությամբ

Սակայն մենք ապրում ենք ծիածանից անդին  
չորացնում ենք շորերը Ծիր-Կաթինի վրա  
գուցե մենք ոչինչ չունենք ասելու հարազատ Երկրին  
հեծյալ հեռանում ենք Բրանդենբուրգի փակվող  
դարպասներից

*Բեռլին, 2004*

**ԹՈՒԻՉՔ**

Ինքնաթիռը պարավում է  
եւ թափ հավաքում  
ցածրեն թռչելու համար:

Ծառերն ու թռչուններն անհետանում են  
ամպերը հանգիստ  
լողում-հեռանում են

Դուրս նայիր պարուհանից՝  
կրեսնես գեպը որ լեռների մեջ  
ասես մխրճված հաստ սողուն լինի:

Նեովում նշողվում է  
շքեղաշուք մի վայր՝  
ասես մանկան խաղ վերջալույսին:

Երեսում մնաց ամեն-ամեն բան -  
երազներ, մարդիկ, հուշեր ու գրքեր -  
հանգստանում են փակ ձեռնափերով:

*Մեղեկին, 2000*

**ՄԵԾԱԳՈՒՅՆ ՆԱՃՈՒՅՔ**

Թող նրանք ճամփորդեն, հյուրերը -  
գեղեցիկ ցեցերը ոսկեգույն բծերով  
խլուրդները վառ կարմիր ճանկերով

Թփուրները, որ փթթում են առավոտվա փառքով  
եւ հոսանքը պղպջուն իր ձայնով  
ալեկոծվող կանաչ խոտը երեսում

Ինչ-որ մեկը օշարակով ներկում է ծառը  
Ղովտի կինը ետ է նայում ու  
մեկեն վերածվում աղե սյան

Գիշերը չգիտի գիշերվա մեղեդին  
մենությունը չգիտի մենության հմայքը  
մեծագույն հաճույքը դուրս է ժամանակից

*Կալիֆորնիա, 1993*





**IV**  
**Խաղաղ օրերի երգը**

**ՆՐԵՇՏԱԿԻ ՆԱԽԱՃԱՇԸ**

Մարգարեների բերանները  
Ճակատները հարուստ երեսակայության

Իրար սիրահարված մերկ մարդիկ  
Մեկ ուրիշի մրգերով լի վազը

Նամբույրը եւ հպումը  
Դեղինը որ պատում է այդ ամենը

Լքված սիրտը  
Ձիերի վրնջոցը

**ՇՈՊԵՆԻ ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ**

Դարեր ի վեր  
երազները դեմք են քանդակել

Թափված փերեւների ու փարիների երգը  
իր միջից արմատ է դուրս հանում

Փոքրիկ աղջկա խեղված աչուկները  
ընկղմված են խոր հիշողության մեջ

Առաքինությունը անսրեսանելի ծաղկի է նման  
նա լուռ բացվում է գունապ դեղնավուն ցողունի վրա

**ԵՐԳ**

Շլացուցիչ հողանի ուրբերը  
սոսափում են չոր խոտերի վրա

Միջարների հանդերձներին նայիր  
Նեժանվի գվարթ երգը լսիր

Մի ալիք փշրվում է  
մենք ընկնում ենք սպիտակ փրփուրի մեջ

Աշխարհն այլասերվում է  
վաչկապուն ցեղերի մոր վարքագծով

**ԱՄԵՆ ԻՆՉ**

Ննջարանում վարդը գեղեցիկ ծաղկել է  
հապրակին խնձորներ են թափված

Անպարասխան մի հեռախոս  
հնչում է ձեռքերից ու սրունքներից վեր

Փոքրիկ քարայծի արյունը  
ցոլարձակում է լուսնկա այգում

Առանց ունքի մի ձուկ թփրպում է  
իմ թաքնված մարմնի մոտ

**ՏԱԳՆԱՊԱԾ ԾԱՌԵՐԸ**

Բոցերի բոցկլպոցը, աստղերի աստղափայլը  
Կարելի է դիտել որպես քարոզներ

Տաք քամին մեղմորեն շոյում է ամպերը  
Ժամանակի կշիռն ավելանում է

Նսկա ապառաժը հայտնվում է արեւի շողերի փակ  
փշրվում դառնում է բեկորներ

մի գնացք շրջվում  
թողնում է բազում անշարժ մարմիններ

**ԾԱՂԿՈՂ ՈՄԿՈՐՆԵՐ**

Նողը ծածկում է ինձ  
չորս կողմից սեղմելով

Աշնան գալուն պես  
օդը լցվում է օսման փուսի բույրով

Երիտասարդ մի օրիորդ կռանում է  
պայծառանում է դեմքս

Նրա նուրբ ձեռքերը  
ճանկավածքներով են

**ՓՈՔՐ ՆՆՋԱՐԱՆ**

Գիրքը նման է փոքր ծովակի  
որն իր մեջ ունի բազում բառերի նավակներ

Աչքն ասես գիշարիչ մի թռչուն հսկում է  
պարբաստ բռնելու այս կամ այն խոսքը

Կամարածածկ մի սուրբ, մի կամուրջ, մի դեղին  
աշտարակ,  
գարդեղեն, դիերի հագուստներ, ամբարված ցորեն

Ջինջ ալիքները գայթակղիչ կրթերը  
ճախրում են գորշավուն առասպաղի փակ



### **ԿՅԱՆՔԸ ԿԵՍՕՐԻՑ ՆԵՏՈ**

Կեսօրից հետո խելառ մի քամի  
մոլեգնում է կապույտ երկինքն ի վեր

շուռումուռ գալով գլուխկոնծի փալիս  
հոսող ջրերի ակունքներում

Եվ թռչունների աչքից խուսափելով  
ընփրում է մի վայր՝ հանգրվանելու

Բայց մահը նման է մեր հողագնդին  
որ հանդուրժում է մարդկային բոլոր սխալները

**ԲԱԶՄԱՁԵՌ ՄԱՐՄԻՆԸ**

Այն զբաղեցնում է հսկայական փարածք  
սակայն ես ավելի հեռու եմ ճամփորդել

Փոքրիկ ձեռքի պես փերեւի մի կտոր  
որ լողացրել են արեւի լույսը, օդը, անձրեւը

Փորձում եմ իմ մաքուր ոլորել նրա մաքուր  
մյուս ձեռքը սակայն արագ աճում է

Ինչքան ամուր է նրա մարմինը  
սակայն ո՛վ կարող է հասնել նրա մտքին

**ՑԻՐՈՒՑԱՆ ՔԱՐԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԸ**

Նաճելի աշուն է

Մի աղջիկ ջրի մոտ իր զգեստն է հանում

Գեղեցիկ մի պահ

որ փայլում է նորեկ լուսնկայի նման

Տերեւներն ու աստղերը

սավառնում են անձիւր երկնակամարում

Անձայր անապատում

լքված մի կորիզ է ահա ընկնում ցած

**ԹԱՅ ԼՌՈՒԹՅՈՒՆ**

Աշխարհը թեքվում է դեպի կաղնին  
եւ մոտենալով՝ քայլում կեսօրվա ուրնահեղքերով

Աշնան վերարկուն մաքուր ու գունեղ է  
նրա վարսերը փռվում են գեպափին

Յողը ցում է խոտերի վրա  
եւ աղջկա սիրտը բաբախում է ուժգին

Նա արգելափակել է խոտքերն աստղերի  
փափուկ տերեւներով իր կոպերի

## **ՉԳՎՈՂ ՄԱՐՄԻՆԸ**

Աչքերս հառած կաղնու կապարին  
փեննում եմ քարափը հարթ  
մինչդեռ փերեաթափը ծիծաղում է իմ թիկունքում

Ես ծնվել եմ ծառերին ապրելու համար  
իմ հասակը ձերի կրկնակին է  
իմ ձեռքերը գիշերն ավելի սպիտակ են

Գարնան անձրեւը սքողում է իմ մերկ ոտքերը  
մի ծածուկ անուն գրկում է ճյուղը  
ջուրը վարարուն առաջ է հոսում

**ԳԻՇԵՐ**

Գիշերը փակել է իր շուրթերը  
շուրթերը ցորենի

Գիշերը բացել է ոտքերն իր  
ոտքերը նշի

Գիշերը փարածել է իր մարմինը  
մարմինը եղեգնյա

Ո՛վ կարող է խույս փալ  
գիշերը աշխարհ է եկել

**ՄՈՒԳ ՄԻՐԳ**

Ես փարածում եմ լեզուս աշխարհում  
ամենուր փարածված է խնձորների բույրը

Կեղեւահան բանանը հոփած է  
նարնջի կորիզները դուրս թքված

Մալորենին արթնանում է գիշերվա խորքից  
փարածում անթիվ սպիտակ գլխիկներ

Ժամանակն է երազելու  
ինչքան ազահ բերաններ կան բացված

**ՉՈՒԿ**

Ձկների ոսկորները կապարյալ սիմեպրիկ են  
օր ու ջրերին դեռ անսովոր

Դրանց թեփուկները ճլվլում են  
միահյուսվում գիշերվան ու ալիքներին

Պոչը պոչի կողքին  
ասես պահապան ժամանակի

Շուրթերը պապակ մնալով  
ավելի ջուր են կուլ փալիս ահից



### **ԼՈՒՍՆԻ ԿԱՄՈՒՐՋԸ**

Մասաչուսեթսի ողջ ճանապարհով ձգվում է  
կամուրջը լուսնի  
հապում անտառը քերելախիտ

Լուսնի կամուրջը անցնում է ամրակուռ պարի վրայով  
վերադառնալով բառերի հայրենիք

Լուսնի կամուրջը փակում է սառնաշունչ շուրթերը  
եւ քոկում արեւի քարաժամ քապին

Երկու կուրծք խավարում կորցնում են իրենց  
հիշողությունը  
ուղիղ կանգնում որպես հավերժի ուղենիշ

Լուսնի կամուրջը շաղկապում է իրար  
ճակատն ու արգանդը  
եւ լրացնում աշխարհի պակասությունը

**ԱՐԴԵՆ ՇԱՏ ՈՒՇ Է**

Գիշերը զբոսնում եմ ճերմակ ձիով  
որտեղ բառեր կան իրար կուտակված

Կույսի արյունն ու արցունքները  
հոսում են անվերջ

Արեւի դեմքը, լճի մակերեսը  
վերածվում են խարխուլված դիմակների

Բյուրեղյա ուռենին, ջրի պղպջակները  
շափրվանի սյունը քամուց բշված

**ԽԱՂԱՂ ԿՅԱՆՔԻ ԵՐԳԸ**


Ծաղկաթերթերը թափվում են ասես  
զանգեր են դողանջում  
հնդկական թանաք, անագաթուղթ՝ երազ  
նկարելու համար

Ջինջ աչքեր ու թարթիչներ երկար  
ամենուր ժամանակի բույրն է սփռված

Ձեռքս պարզելով  
հավում եմ կինոաստղին օրացույցի

Մի թռչուն է ճչում իմ երազի մեջ  
գորշ գիշերը նորից վերադառնում է

*Նանչժուու, 1992*



**V**

## ԿԱՆԱԶ ԱՐՅՈՒՆ

Կեսգիշերին հյուսիսից փուն դառնալիս  
մտնում եմ իմ փունը, շրջվում ու փակում եմ դուռը  
աստիճաններին սոսու փերեւ է ընկած  
թայֆունից մնացած  
ծառի ճյուղերը վաղուց մերկացել են:  
Ինձ թվաց գեպնին  
մակարդված արյան ավազաններ կան:  
Տիշեցի ծնողներիս, որ գովանում էին  
ծառի փակ ու խոսում  
իրենց թռռների մասին, հիշեցի  
այդ փեսարանը, անգամ հիշեցի  
թե ինչպես էին սեւ սերմեր թքում:  
Դա անցած փարվա խաղաղ ամռանն էր:  
Այս փարի չգիտեմ՝  
ինչպես են նրանք անցկացնելու իրենց ամառը:

*Տանջժոռ, 1988*

**ԼԻՃԸ**

1

Պայծառ ջինջ մակերեսային վեր  
ծիծեռնակը թռչում է արբեցած

այս փոքրիկ լճակում  
նա ասես մարտական ինքնաթիռ լինի

2

Մի վրիպ ծերուկ  
երկու թիակներ է փարուքերում

թաց իրանը  
մակերեսային ճեղքվում է

3

Լիճն արփացում է լեռները  
մուգ կանաչ ալիքների փակ

հավանաբար այնտեղ արեւադարձային  
անփառ է խշում  
որը հսկում են որսորդներն ու ձկները

4

Նվաղ գով զեփյուռը  
վերավերում է լճի մակերեսին

լիճն ունի բազում հոգսեր  
նա միայն թվում է անարարքեր

5

Մարդիկ լողում են ջրից դեպի ափ  
դեմքը նրանց նման է ձկան թեփուկի

արեւի լույսը խիտ ճյուղերով ծածկված  
կտրում է հանց շեղք

6

Մութը թաքցնում է մեզ  
ինչ-որ մեկը թաքնվում է քարի ետևում

նրա ձայնը դեռ  
արձագանքվում է

*Նանչժուու, 1996*

**ԲԱՌՇԻ ԲԼՈՒԲԸ**

Արեւմտյան լճից վեր ուռենիները մեղմորեն ծփում են  
փոխհաջորդելով մի դեղձ, մի ուռի  
իր ծաղկունքն ապրող մի դեղձենի:

Ջարդված կամրջին  
կաթիլների պես խումբն է սիրահար  
անապարում դեպի մշուշ արեւմուտք

Փեղրվար, վաղ գարուն  
Բառշի բլրի թավ կանաչի վրա  
ու՛մ շուրթերն են բացվել ու բլբլախոսում

*Ֆրեզնո, 1994*



**ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆՆ ԻՄ ՆԱՅԻՆՆԻ ՔԱՂԱՔՈՒՄ**

Շատ փարիներ անց վերադառնում եմ իմ բնօրրանը  
եւ վազվզում եմ երբեմնի սիրուն  
ու լքված հին ջրհորի շուրջ:  
Նրա կեցվածքը հեզաճկուն է օրհորդի նման, եւ

նրա լեզվի ծայրից ծիծաղ է խայտում:  
Ապշած նրանից՝ զգում եմ քնքշություն:  
Այն ինձ հիշեցնում է  
իմ ճամփորդած բոլոր վայրերը, բոլոր  
այն կանանց, որոնց փեսել եմ, նրանց պարածելը

ալիքանման, որ բաժանում է ժամանակը եւ  
բաժանում է մեզ:

Մինչ ես մտածում եմ, նա արդեն շրջվել  
ու հեռացել էր, թողնելով լոկ իր հրաժեշտի ձեւը,  
հիշեցնելով հնայքն իր անցյալ երիտասարդ  
փարիների

*Մեդեյին, 2000*

**ՆՈՒՇԻ ԹԵՎԵՐԸ**

Երբ հեղաքրքրասիրությամբ փենչում էի անսանձ  
երեսակայություն

ես վերհիշեցի հեռավոր անցյալս -  
ցրփից այտուցված զույգ ձեռքեր ահա  
հայտնվում են սպիտակ վարագույրից  
մերձավորի մի դեմք, ով վաղուց չկա  
հեռավոր մի հուշ՝ բաց մանուշակագուն

երանգ սրացած

որ վեր է ածվում ծովի լագուրի  
հեփո դառնում մի հնաոճ փնակ

ամուր սալահապակով

որ վնասում է կոպը մութ գիշերվա  
հեփո կրկին դառնում զգուշորեն շինված

մի հին բազկաթոռ

ես մի գրադարակ գրքերով լեցուն  
վերավերող հուշի երկու թեւիկներ

*Ֆրեզնո, 1993*

### ՊԱՏՄՏՈՅԻ

Լուսամուտից դուրս լուսափայլներն են  
շողարձակում:

Դաշպում՝ կռկռացող գորտերի ռիթմ:  
Մենյակում՝ մեր մայրն է մտերմիկ խոսում:  
Իմ կողքի փղան ռեպին փնփրելով՝

խցկում է ձեռքը իմ կանաչավուն փաբափի մեջ:  
Նաճույքն, հանց ալիք, արագ անցնում է  
իմ ողջ մարմնով:

Նեպո մի նոր ռաունդ, իմ հերթն է ահա,  
մինչ մեր մայրերը կհոգնեն իրենց հին գրույցներից:

Նիմա ես պառկած՝ վերհիշում եմ հսրակ  
այդ ձեռքի վրա հառված աչքերը, որ ետ էին քաշվում  
լուսարձակման պես, եւ ձգվելով կրկին  
մինչ օրս, հազարավոր կլիոմեպրեր հեռու:

*Մեդեվին, 2000*

**ՏՐԱԿՏՈՐԻՅ ԻԶՆՈՂ ԳՅՈՒՂԱՅԻ ԱՂԶԻԿԸ**

Երբ ես քայլում էի գյուղի փողոցով  
եպեւիցս մի փրակփոր մոտեցավ  
ու հենց այդ պահին գլուխս շրջեցի  
նայեցի գյուղացի աղջկա աչքերին

Նենց որ հեռացավ հռնդյունը խուլ  
նրա հովանոցը մեկեն մեծացավ  
նա թեքվեց ճամփեզրի ցորենի դաշտը  
իմ դիպանկյունից դիպում էի նրան

Նրա գլխաշորը ասես դրոշակ փողփողում է դեռ  
եւ նրա ոտքերը երկար են կյանքից -  
կարծես Ջոան Միրոյի վրձնից աճած -  
մեկ-մեկ ձգվում են առ իմ ձեռքը պարզած:

*Նանչժու, 1988*

### ՆԱՐՑ

Լուսամուրի ճաղավանդակներից առաջ խցկվելով  
իր ծնկի վրա աթոռը մասերի է բաժանում նա  
ձմեռային քամին ծածուկ լքում է սոսյաց փչակը  
թափված փերեւների սրվերը ձգվում ու անէանում է  
ձյան պես ընկնելով՝ լուծվում է ջրում  
կարեւոր մարդիկ մեքենաներով շրապում են իրենց  
գրասենյակները  
մինչ երեխաներին մի փոքրիկ իդձ է առաջ մղում  
ապրում ենք աշխարհում ասես համազարկ  
գնդակների  
որ անցնում է պարով խավարչրին գիշերվա

*Նսնջժու, 1989*

**ՆԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ**

Նիշում եմ ամառ էր  
մի կանաչ բզեզ  
սողալով բանասպեղծություններիս հատորի վրայով  
Դավիթ Իզնապով անվան կողքին կանգ առավ:  
Երկար ժամանակ չուզեց հեռանալ  
եւ միացավ իմ ընթերցանությանը: Ուրախությամբ,  
օգտագործելով իմ ճկույթ մաքրը,  
ես նրբորեն դիպա նրա փորին:  
Մի ակնթարթ անց  
նա արդեն ընկած էր  
ծանոթագրություն դարձած:  
Դա ինձ շաք զվարճացրեց  
հավերժ մնալով իմ հիշողության վրա:

*Նանչժուու, 1988*

**ԹՈՉԿՈՏՈՒՄ**

Ամեն մի մաքուր բրնձի ցողուն  
պատված է արծաթագույն լուսնալույսով  
եւ հեպո հյուսված է պարանի մեջ:

Ուրնակոճի արծաթե շղթայի նման  
շրջան շրջանի շուրջ  
նույնպես պատված է լուսնալույսով

Նոնքի ծայրը, փաճարը  
եւ բազկի վրա դրոշմված այրվածքը,  
ամենը թրթռում են պարանի վրա:

*Մանիլա, 2005*

**ՋՐԻ ԵԶՐԻՆ**

Մթնշաղն է իջնում: Բյուր ագռավներ սառած  
լճի շուրջն են խմբվում: Մոտակա բլրին  
օդը ցրտում է խիստ, մայրամուտն ահա  
վերսպին սրնում է թփուտների մեջ:

Ջրի եզրին ես շուկով երգում եմ  
երեսակայում՝ լեզվով պաղ ջրին հարվածում եմ  
թեթև

մինչև աստղերն են հայտնվում երգիս մեջ  
եւ շարանները արտասուքների:

*Նանչժուու, 1991*



**ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ/ՆՆԴԿԱԿԱՆ  
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ԺՆԵՎԻ ԼԻՃԸ**

մուգ կապույտը բաց կապույտում-  
նրա մի անկյունում կղզի է ընկած  
կարարյալ խաղաղ, լոկ արեւի շողն է  
ճշարում նրա չափն ու փարածությունը:

Ալպերը վերելում  
մարակարարում է սառն աղբյուրներ, եւ  
թափանցում սեւագիր բանասրեղծությանս մեջ  
լողալու այնպեղ, կլանելու շրջակա փեսարանը:

**ՆՈԳԻ**

փերեւից թերթեւ  
թռչնի երգի պես-  
մի գյուղից ծանր  
հնչող զանգի պես:

գրում է այրին  
աննարմին գրչով-  
եւ անպեսասնելին  
թաքնվում է ջրում:

## ՆԵՂԵՂ

հոգնել են նրանք փնտրից ու փողոցներից,  
հոգնել դաշտերից ու լճերից-  
մտնում են նրանք ճեփ-ճերմակի մեջ:

նրանք ուզում են այսպեղ կանգ առնել  
կանգ առնել իրենց սեփական փանը-  
ուր չկան գրքեր, բազմոց, մեքենա:

սահում են նրանք կապույտ սահնակով  
ընտրում հիասքանչ անհողմ մի տեղանք,  
եւ քնում մաքուր սպիտակեղենում:

**ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ**

գեպերը ծնվում են  
սեզ լեռներում եւ վեհ բլուրներում,  
հարթավայրը  
դյուրին է սնուցում լճերը:

եւ մարդկանց մտքերը  
գերի են դարձել իրենց սեփական փորձառությանը-  
որոշները խոր,  
որոշները լայն:

**ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՍԻՐՏԸ**

բեկբեկուն լույսի մի կտոր հանկարծ  
հայտնվում է մռայլ-ամպամած երկնում-  
լճին մաքուցելով կապտահուռ շողեր:

բանասպեղծի հոգին իրոք պեպք է որ այսպիսին լինի:  
փխրության մշուշը մի կողմ հրելով`  
այն մթության մեջ պատուհան է բացում:

**ԵՐԿՆԱՐԿԱՆԻ ՇԵՆՔԸ**

Իմ աչքերի մեջ  
երկհարկանի շենքը  
հոյակապ կառույց է  
այս մոլորակում:

Երբ դուք ասում եք ծաղիկը  
սիգամարզի սահմանն է,  
ապա սիգամարզը  
փակոցափեղկերի սքվերն է:

լույսը միշտ  
մի կերպից է իր սկիզբն առնում  
մինչ գորշ ամպերը  
միշտ առապորեն դուրս են գալիս:

երկհարկանի շենքը  
Իմ աչքերում  
երկու անհայտով գծային հավասարում է-  
կադարյալ անսխալ:

**ՆԵՌՈՒ ԵՎ ՄՈՏ**

Լճի ջուրը շափ հեռու է ինձնից:  
փոթորկված թե խաղաղ  
նրա ալիքները պարզորեն տեսնել չի հաջողվում:

ասես մի գեպ կա իմ մարմնում,  
այնքան մերձիմուրտ -  
չեմ կարող ասել նրա ուղղվածությունն ու  
սկզբնաղբյուրը:

**ԺԱՄԱՆԱԿԻ ԳԻՐՔԸ**

ինչպես ամբողջ թվերն են բաժանվում  
կենտ ու գույգ թվերի  
գիրքն ունի իր երեսկողմն ու հակառակ կողմը,  
եւ ժամանակը կտրում է ցերեկն ու գիշերը:

սակայն երբ թերթում եմ գրքի էջերը  
առաջին ու վերջին տողի միջեւ  
չեմ գտնում ոչ մի փարբերություն:



**ՆԵՌՈՒ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

միշտ ձգում են ինձ հեռու փարածությունները-  
միշտ ձգում են լողացող փեսարանները-  
միայն երբ թռչունը պտույտ է գործում բրնձի

դաշտի շուրջ,

փեղյակ եմ լինում թաքնված ոսկու մասին:

միայն երբ քամին փչում է շուրջս

եւ ցնցում-ձայնում է կողքիս դեղձենուն,

նրա սրվերը նագենի է թվում:

միայն երբ արեւը անողորձաբար

հուրհրապում է դեմքիս,

խաղողի այգին առավել կանաչ է թվում

կանաչ խոփից,

հեռավոր մշուշի գունապ գույնը նույնպես

ավելի գրավիչ է երեւում աչքիս:



### **ՆԱՐԱՎ-ՆՆԴԿԱԿԱՆ ԱՅԳԻՆ**

Մկյուռի պոչը խոզանակում է լուսամուտագոգը:

Երկնքից մի սալոր է ընկնում անաղմուկ:

Միջապաները երգում են արմավենու փակ  
մոտակա շուկայում խեղդող աղմուկ է:

Միրամարզը հյուսիսից լուրեր է բերում:

Մարդիկ լողանում են Գանգեսի հոսքում

մաքրելով եսասեր շարժառիթներն ու իղձերն իրենց,

մինչ փղերը ծալում են կնճիթները ձիգ:

Երբեք կենդանիներին մոտ չեմ եղել այդքան

նրանց հետ միասին ես չեմ ապրել-

այժմ կարող եմ իմ սիրտն ավելի հստակ պեսնել

քան գիշերային թռիչքների պահին:

**ՕԿՏԱՎԻ ՆԵՂՈՒՅԸ**

Կերալոյի գեղեցկարես ափին ընկած է  
նավահանգստային քաղաք Կալկաթան:  
Ժենգի ծովային նավատորմիդը: Մի անգամ նա  
այստեղ ճակատամարտել է:  
Որտեղ են թաղված նրա ոսկորները, դեռ հայտնի չէ:

Երբ նա անցնում էր Օկտավի նեղուցով  
Մոլդիվա փանող երկար ճանապարհին  
քարերով լցված մի անանուն ծովում  
նա հանդիպում է պորպուգալացիների:

Լսում է ագռավների սեւ ճչարձակումը  
երբ շարունակում էր իր նավարկությունը  
Արաբական ծովի եւ Ննդկական ծովի սահմանից  
դեպի Մոզադիշո:

**ԿՈՒՍԱԿՐՈՆ ԱՇՈՒՂ**


Մինչ Օրիսեցի մի բեյսբոլիստ  
Մադուրայում ծափահարությունների էր  
արժանանում,  
մենք վերջացրել էինք երեկոյան թեյը  
ու մտնում էինք նիստերի դահլիճ:

Մահաթմա Գանդիի կիսանդրին  
դրված էր կիսամութ մի անկյունում,  
մինչդեռ հակադիր երկու կողմերում  
եղնիկներ, փղեր,

եւ Արքայական բենգալ վագրն էր:  
Անտառներն անխնա ավերած են - ասես  
մորուք եւ մազեր նրա ճակատին  
որ դարձնում է նրան կուսակրոն աշուղ:

*Չինարենից անգլերեն թարգմանությունները՝  
Ռոբերտ Բերոլդի, Քայ Տյանսինի, ինչպես  
ևսե՛ն՝ Ջոն Ռուզենվոլդի, Ջեյմս Բուզի,  
Միշել Նայթի եւ Պատրիսիա Նոլանի*

## ԷՍՍԵՆՆԵՐ



**ԱՐԵՎՄՏՅԱՆ ԼԻՃԸ ԿԱՄ՝  
ԵՐԱԶԱՆՔԻ ՏԻՆԳ ՎԱՅՐԿՅԱՆՆԵՐԸ**

1

*Ջրի եզրին*

*Մթնշաղն է իջնում: Բյուր առաւելներ սառզած  
լճի շուրջն են խմբվում: Մոտակա բլրին  
օդը ցրտում է խիստ, մայրամուտն ահա  
վերստին մտնում է թփուտների մեջ:*

*Ջրի եզրին ես շշուկով երգում եմ  
երեւակայում՝ լեզվով պաղ ջրին հարվածում եմ թեթեւ  
մինչեւ աստղեր են հայտնվում երգիս մեջ  
եւ շարանները արտասուքների:*

Գարնանային մի օր՝ 1991թվականին, միայնակ թափառում էի Արեւմտյան լճի մոտ եւ գրի առնում, կամ ավելի ճիշտ՝ ստանում այս բանաստեղծութունը: Այդ օրը սովորականի նման անպամած էր: Ես դուրս եկա իմ սենյակից եւ հեծանվով ճամփա ընկա դեպի Քսիքսի Ռոուդ եւ Բառչի Ռոուդ: Դեպի աջ ուղղվելով՝ անցա Կոտրված կամրջի վրայով, այնուհետեւ Բաիդի Քոզվեյի մոտ դանդաղ արգելակեցի: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ ես հաճույք էի ստանում բառախաղերից: Այն ժամանակ Յանչժոուն մի փոքրիկ քաղաք էր՝ պարզ կյանքով: Այնտեղ կային հանգստի համար նախատեսված միայն մի քանի վայրեր, չկար ոչ բար, ոչ

թեյատուն, ոչ պարասրահ: Չկային անձնական օգտագործման մեքենաներ, դեյուքս շքասենյակներ կամ հինգաստղանի հյուրանոցներ: Դեռ հասարակությունը բաժանված չէր երկու բեւեռների՝ «կապույտ օձիքավորների» եւ «սպիտակ օձիքավորների»՝ աղքատներ ու հարուստներ:

Չնայած Բաիդի Քոզվեյը քաղաքի կենտրոնից հեռու չէր, այնտեղ ես հազվադեպ էի հանդիպում իմ ծանոթներին: Ջրոսաշրջիկների մեծ մասը քաղաքից չէին, դրանից այդ վայրը մի տեսակ պատրանքային տեսք էր ստանում: Բացի այդ, ես երկար ժամանակ Յանչժոյուն չէի ապրել, եւ ամեն անգամ Արեւմտյան լճի մոտ թափառելիս տարբեր զգացողություններ էի ունենում: Եթե ես այդքան ազահ չլիների, ոգեշնչման համար այդքան հաճախակի չնայեի Արեւմտյան լճի կողմը, ես իմ ճամփորդությունից ինչ-որ բան կսովորեի: Ինչպես գրել է ֆրանսիացի փիլիսոփա Գաստոն Բաշելարը՝ «բանաստեղծի կյանքում լինում են պահեր, երբ երեւակայությունը ասիմիլացնում է իրականությունը/ երեւակայությունը նմանեցվում է իրականությանը»: Ինչեւէ, իմ գրած բանաստեղծությունները Արեւմտյան լճի կամ Յանչժուի հետ ոչ մի կապ չունեն: Այնուամենայնիվ, այդ օրը մի տեսակ անսովոր էր: Ես վեր ու վար էի անում Բաիդի Քոզվեյով եւ վերջապես կանգ առնելով՝ նստեցի մի նստարանի, աչքերս հառելով սառած լճին: Միայն երբ մութն ընկավ, եւ ես մի թռուցիկ հայացք ձգեցի Բաոշի Բլրին, բանաստեղծություն գրելու ներշնչանքը համակեց ինձ: Անխոս, դա հիանալի փորձառություն էր. այդ պահին երեւակայությունը նկարում էր այդ պատկերները հիշողությունից: Ի՞նչն էր հատկապես հազվադեպ ու թանկարժեք՝ որ դա Արեւմտյան լճի մասին մի բանաստեղծություն էր:



## 2

Իմ հայրենի քաղաքը ընկած է Արեւելյան Չինական ծովի ափին, մի վայր՝ լի նարնջի ծառերով ու ճապոնական զկեռենիներով, մի կոմսություն, որն այլեւս որպէս պաշտոնական միավոր գոյություն չունի: Ես ծնվել ու մեծացել եմ այնտեղ, եւ մինչեւ համալսարան ընդունվելն այնտեղից չեմ հեռացել: Առաջին անգամ Արեւմտյան լճի մասին լսել եմ, երբ ընդամենը ինը տարեկան էի: Այն ժամանակ Ռիչարդ Նիքսոնը՝ ԱՄՆ-ի նախագահը, առաջին անգամ այցելեց Պեկին, այնուհետեւ եկավ Յանգժոու: Երբ լրագրերը հրապարակեցին ամերիկացի հյուրերի՝ Ծաղկե նավահանգստի մոտ ձկներին նայելիս նկարները, Արեւմտյան լճի գեղեցկությունը խորապէս դրոշմվեց իմ հիշողության մեջ: Այժմ էլ տակավին կարող եմ հիշել կոմսության ավտոկանգառում, պատի վրայի այն նշանը՝ 324 կմ մինչեւ Յանգժոու, տոմսի արժեքը՝ 7.8 յուան: Միայն վեց տարի անց ինձ հաջողվեց իմ սեփական աչքերով տեսնել Արեւմտյան լիճը եւ կողքին բազմած քաղաքը: Չեք կարող պատկերացնել՝ ինչ էր նշանակում այդ առաջին տեսողական ընկալումը մի տղայի համար, ով սիրում էր երազել:

Ես տեսա Արեւմտյան լիճը Ձինանում՝ համալսարան գնալու ճանապարհին, որը նույնպէս իմ առաջին երկարատեւ ուղեւորությունն է համարվում: Երբ ավտոբուսը անցնում էր Քիենտենգ գետի կամրջի վրայով, ես տեսա Վեց ներդաշնակ պոզողան<sup>1</sup> եւ Ցայ Յոնսիանի հուշահամալիր թանգարանը: Ավելի ուշ մեր միջնակարգ դպրոցի դասագրքերում հայտնվեց միայն հուշա-

<sup>1</sup>Պոռոդա՝ հարկաշարք աշտարակ կտուրի ցվիքներով

համալիրը, բայց ոչ պոզողան՝ անգամ անտեսվեց դրա հազարամյա տարեդարձը: Սա շատ անհավատալի է հնչում, այժմ այն դիտվում է որպես բիզնես հնարավորության վատնում: Ճիշտն ասած, մինչ այժմ ես կասկածում եմ, որ հայտնի միջադեպը՝ «դասակարգային թշնամիները նենգադուլում են կամուրջը», իրոք երբեւէ տեղի է ունեցել: Եթե դա այդպես է, ապա նրանք, իրոք, իսկական ահաբեկիչներ են: Ստվերոտ Նանչան փողոցից դեպի հյուսիս՝ Արեւմտյան լիճն է հեռվում փայլկտում, ի կատար ածելով մանկական մի երազանք: Այդտեսակ աստվածահայտնություն կրկին միայն տասնյոթ տարի անց պատահեց Նիցցայից Փարիզ՝ «Եվրոստար» ճեպընթացում: Ջինանի ամենահայտնի տեսարժան վայրերից են Գարնանային ցայտաղբյուրն (Բառտու Սփրինգն) ու Առեղծվածային լիճը (Դամիզ Լեյքը)՝ միակ լիճը հյուսիսային քաղաքներում, ի համեմատ Պեկինի Ամառային պալատի: Քիաքոնգլանգ տաղավարը ստեղծագործության քառյակում նշվում է որպես, չորս կողմը լոտոսների, երեք կողմը ուռենիների ու լեռների քաղաք, մասամբ՝ լճերի»: Թու Ֆուի բանաստեղծությունը՝ «արեւմտյան ծովի այս տաղավարը ծեր է, Ջինանը ունի շատ անհատականություններ», մեծ հռչակ բերեց գարնանային քաղաքին: Թանգ եւ Սոնգ դինաստիաների ութ գրական վարպետներից մեկը ժամանակին կառավարել է Ջինանում: Սոնգ դինաստիայի երկու հանճարեղ վիպասանների նախկին բնակատեղիները գտնվում են լճի մոտ: Չինգ դինաստիայի վիպասան Լիու Ին իր «Լաո Քանի ճանապարհորդությունները» վեպի առաջին գլխում նկարագրում է Առեղծվածային լճի գեղեցկությունը: Այնուհանդերձ, նրանցից ոչ մեկը ինձ չհուզեց: Ամառային ու ձմեռային արձակուրդներին, երբ պետք է տուն վերադառնայի, ես միշտ գե-

րադասում էի շատ ժամանակ անցկացնել Հանչժոյուն՝ թողնելով իմ առաջին սիրո ոտնահետքերը Արեւմտյան լճի մերձակայքում: Այդ ժամանակ ես ամբողջովին տարված էի մաթեմատիկայով եւ թափառում էի մաթեմատիկայի թագավորությունում: Տարիներ անց, երբ ավարտեցի, ես եկա Հանչժոու որպէս ուսուցիչ եւ գրեցի մի վեպ՝ որպէս մի հուշ իմ պատանեկությունից: Այն նաեւ իմ՝ Արեւմտյան լճի մասին գրած վաղ շրջանի գրվածքներից մեկն էր:

### ***Բառչի բլուր***

*Արեւմտյան լճից վեր ուռնիները մեղմորեն ծփում են փոխհաջորդելով մի դեղձ, մի ուռի իր ծաղկունքն ապրող մի դեղձենի:*

*Ջարդված կամրջին կաթիլների պես խումբն է սիրահար աճապարում դեպի մշուշ արեւմուտք*

*Փետրվար, վաղ օարուն  
Բառչի բլրի թավ կանաչի վրա  
ու՞մ շուրթերն են բացվել ու բլբլախոսում*

### 3

«Դրախտը վերելում է, Սուժոուն եւ Հանչժոուն՝ ներքելում»: Այս հին ասույթի հետքերով գնալն այժմ անհնար է թվում: Տասներեքերորդ դարում վենետիկցի Սարկո Պոլոյի ընկալմամբ՝ «Սուժոուն երկրային քաղաք է, մինչդեռ Հանչժոուն՝ դրախտային»: Իր հայտնի «Ճանապարհորդություններ»-ում այս հայտնի ճանապարհորդը ամբողջ տասնչորս էջ է նվիրել Հանչժոու-

ին, եւ միայն մեկ էջ՝ Սուժուին: Նա օգտագործել է հետեւյալ արտահայտությունը. «Դրախտ երկրի վրա» (որն այսօր Արեւմտյան լճի մոտ գտնվող մի ռեստորանի անուն է): Նրա նկարագրությունը «ճանապարհորդություններում»՝ «աշխարհի ամենափառահեղ ու ամենասքանչելի քաղաքը» եւ նրա բնակիչների առօրյան, առ այսօր հանդիսանում է ամենաճշգրիտը Հանչժուուի համար:

Նա նկարագրում էր տեղաբնակներին, ովքեր սիրում էին ուտել լոր, թռչնամիս, ծովամթերքներ, նկարագրում էր պերճաշուք հարսանիքներն ու ճաշկերույթները, գեղանկարներն ու ինտերիերի դեկորացիաները: Քաղաքը համադրում էր մյուս քաղաքների հետ՝ իր մարմնավաճառների շշմեցուցիչ քանակով, բարետես տղամարդկանցով եւ սրտաբաց կանանցով: Չգիտեմ՝ երբվանից Արեւմտյան լճի հիասքանչ բնապատկերը սկսեց ավելի ստատիկ դառնալ ու խամրել, անգամ գրական տաղանդների անկում կար: Դա էր պատճառը, որ շնորհալի բանաստեղծներից ու գրողներից շատերն իրենց երեւակայությունն ու համարձակությունը շատ շուտ կորցրեցին: Մի անգամ Լու Սյուն Հանչժուու տունդարձի իր ճանապարհին գրեց մի բանաստեղծություն՝ Յու Դաֆուին հակառակը համոզելու համար: Նրա մեկնաբանությունները Արեւմտյան լճի վերաբերյալ հետեւյալն էին. «Արեւմտյան լճի տեսարանը հաճելի է, այնտեղ ուտելու եւ խաղալու համար բազմաթիվ վայրեր կան, սակայն եթե այնտեղ հղփանան, լճի ու լեռան տեսարանները կմաքրեն այդ սնափառությունը»: Նման ընկալում ունեն ոչ միայն գրական ասպարեզի մարդիկ: Շաոսինայից, Լու Սյունի հայրենի քաղաքից, դեպի Նինբո, թվում է՝ մարդիկ հիանում են Շանհայի ապրելաոճով ու ռիթմով: 1950-

ականների սկզբին Շանհայի քաղաքագլուխ մարշալ Չեն Յինը այցելեց Չանչժոու: Ժենժանգ նահանգի բարձրաստիճան պաշտոնատար անձինք նրան հյուրասիրեցին ու խնդրեցին նշանավորման կամ հրահանգի մի քանի խոսք ասել: Անսպասելիորեն, հունորի զգացողությամբ օժտված Չեն Յինը ասաց. «Չանչժոու քաղաքի ղեկավարները սովորաբար լավ են ասմունքում, ինչպե՞ս է, որ մարշալը գալիս է ու ոտանավոր չի ասում»: Սա շփոթեցրեց հյուրընկալողներին: Իրոք, Սու Դոնգպոյից հետո Չանչժոուի ո՞ր չինովնիկը կարող է հպարտանալ իր գրական ձիրքով:

Էլիզաբեթ Բիշոփը գրել է. «Երեւակայության բացակայությունը մեզ ստիպում է գալ երեւակայական վայրեր, ոչ թե ուղղակի տանը նստել», «Տունը այն տեղն է, որտեղից ամեն ինչ սկսվում է». այսպես էի սկսում իմ գրած արձակի առաջին նախադասությունը: Չավանաբար տարօրինակ է թվում. ի վերջո, ես ապրել եմ Չանչժոու քաղաքում՝ երկրի վրայի դրախտում:

Իմ ուսանողական ուղեւորություններից հետո՝ 1990թ.ամռանը, ես այցելեցի ծովափնյա երեք քաղաքները՝ Ֆուժոու, Ցինադո եւ Սիամեն. կապույտ ծովը ակնհայտորեն ազդում է երեւակայության վրա: Անսահման ծովը ոչ միայն կարող է ներառել մանկական երազանքներ, այլ նաեւ կարող է ամոքել վիրավոր հոգիները: Սիամենի համալսարանը (հավանաբար Չինաստանի ամենագեղեցիկ համալսարանը) ինձ ներշնչանք տվեց: Այնտեղի ուսանողական ավանը ոչ միայն մոտ է լողափին, այն նաեւ ունի մի հաճելի փոքրիկ լճակ, որտեղ օր ու գիշեր կարող ես նավակով թիավարել: Ես այդ ուղեւորությունը գրի առա մի կարճ բանաստեղծությամբ: Նաեւ առաջին անգամն էր, որ ես սիրահարվեցի լճին, որը Արեւմտյան լիճը չէր: Միգուցե

ՔԱՅ ՏՅԱԼՍԻՆ

ես դիտեցի այն որպես Արեւնոյան լճի շարունակութիւն:

*Լոտոս լիճը*

*Մի անձամբ Լոտոս լճում թիավարելիս՝ տեսա ջահել մի կնոջ՝ ափի մոտ, մտքերի մեջ սուզված, կոծակները փայլփլում էին նրա ամառային*

*զետտի վրա:*

*Նավարկելով մոտիկ՝ նրան հրավիրեցի ինձ միանալ:*

*Նախ, ես ապշահար նայում էի նրան, հետո*

*նա ժպտաց:*

*Մթնաշաղը պարուրեց մեզ, փոքրացնելով մեր միջեւ տարածությունը. նուրբ քեղեցիկ*

*մի պուտիկ՝*

*քրքից ավելի մոտ, աստղից շատ հեռու:*

4

Մարկո Պոլոյի «ճանապարհորդությունները» արեւմուտքում արեւելքի հանդեպ անսահման թովչանք սադրեցին: Միեւնույն ժամանակ այն խթանեց իմ սեփական երազանքը՝ ճանապարհորդել դեպի արեւմուտք: 1993թ.աշնանը, Հոնկոնգ ճանապարհորդելուց հետո, ես շտապեցի ԱՄՆ: Տեղի էկզոտիկ հայացքները, մարդիկ ու սովորույթներն ասես նոր շունչ էին հաղորդում հայացքիս, բացում իմ բոլոր ծակոտիները՝ ազատորեն շնչելու համար: Կարճ ժամանակահատվածում ես գրեցի տասնյակ բանաստեղծություններ: Դրանցից շատերը, ինչպես «Նիագարա ջրվեժը», «Միլերտոն լիճը», արտահայտում են այդ գեղեցիկ տեսարանների հանդեպ ունեցած իմ զգացմունքները, չնայած պակասում է պատմական խորությունը: Ճապոնիայով անց-

ճանապարհին ես գրեցի մի բանաստեղծություն՝ վերնագրելով «Աշի լիճը», որն ընկած է Հակոն Լեռների գրկում, Հոնոլու կղզու մեջտեղում: Բայց եւ այնպես այս զգացողությունները ոչ մի յուրահատուկ տեղանքային բույր չէին պարունակում: Անգամ այն բանից հետո, երբ իմ ուշադրությունը գրավեց հսկա միգապատ Միչիգան լիճը Չիկագոյում եւ Օնտարիո լիճը Տորոնտոյում, իմ բանաստեղծություններում դեռ առկա էր արեւելյան բուրմունքը:

*Լճի ջուր*

*Հողը լճի ջրի լայնեղ տարածք է  
Երկինքը լճի ջրի արձակ տարածք է  
Քաղաքը լճի ջրի հսկա տարածք է  
Տունը լճի ջրի լայնշի տարածք է*

*Պատը ուղղածի՝ լճի ջուր է ամուր  
Աթոռը ճոճվող լճի ջուր է միրհուն  
Թեյի բաժակը լճի ջուր է ողորկ  
Սրբիչը կախված լճի ջուր է փափուկ*

*Արեւաշողը թափանցիկ լճի ջուր  
Երաժշտությունը հոսող լճի ջուր  
Սերը փոխադարձ զօգնունք լճի ջուր  
Երազանքը հեքիաթային լճի ջուր*

«Ոչ մի երկիր ինձ չի գոհացնում, ահա այսպիսի ճանապարհորդ եմ ես», - ասել է ֆրանսիացի բանաստեղծ Անրի Միշոն իր «Էկվադորում»: Նրա երկու բանաստեղծական ժողովածուներն էլ երեւակայական ուղեւորությունների մասին են: Փաստորեն, ճամփորդությունը

մարդկային համընդհանուր կարիք է, մի միջոց՝ մեր կյանքի բովանդակությունն ընդարձակելու: Ես միշտ հավատացել եմ, որ իրական բանաստեղծը կամ արվեստագետը անպայման չէ, որ գիտելիքներով զինված լինի, նա նաեւ պետք է ունենա թարմ օդ շնչելու անհրաժեշտությունը: Ինչպես գրել է Արթուր Ռենբոն՝ «Կյանքն ամենուր է»: Փարիզի համալսարանի ուսանողները լղոզել են դա ուսանողական ավանի պատերին: Միլան Կունդերան օգտագործել է «Կյանքն ամենուր է» տողը՝ որպես մի բանաստեղծության վերնագիր:

Ամեն անգամ օտար երկրից Յանչժոու վերադառնալիս ես այդ քաղաքի մասին նորանոր բացահայտումներ ու ընկալումներ էի ունենում: Ես գրեցի այսպիսի տողեր. «Նրա գեղեցկությունը իմ մարմնում ներարկում է չափավոր թույն»... «Ես ունեմ իմ երկու թիերը՝ խոսքերն ու երեւակայությունը»... «Փառահեղ հանգստությունն ու հավակնոտ պարզունակությունը արտացոլում են միմյանց»: Եվ ոչ միայն, դա պատրվակ հանդիսացավ՝ հնարավորություն ընձեռելով արձակի համար նոր գրական ձեւի: Ենթադրվում է, որ համացանցի գործածումը գրողի ֆիզիկական տեղորոշումը պակաս կարեւոր է դարձնում, օրինակ՝ գիտական աշխատանքներ գրելը: Իմ գրական գործունեության ընթացքում ես արձակ ստեղծագործություններ եմ գրել տանը եւ բանաստեղծություններ՝ արտասահմանում: Միջերկրական ծովի շուրջ իմ ուղեւորությունը, հատկապես նոր հազարամյակի ուղեւորությունը դեպի Լատինական Ամերիկա եւ Մեռյալ ծովից Կասպից ծով ուղեւորությունը ստիպեցին ինձ կրկին ըմբռնել բանաստեղծական ներշնչանքի տարափը: Ամբողջ ճանապարհին լսում էի Միչոյի ձայնը. «Գրում եմ քեզ մի հեռավոր երկրից»:



## 5

Չանչժոուն այն քաղաքն է, որտեղ ես ամենաերկարն եմ ապրել, եւ այդ քաղաքի մասին իմ դիտարկումը նույնպէս մանրակրկիտ է: Արեւմտյան լիճը Չինաստանի մյուս զբոսաշրջային տեսարժան վայրերից ավելի է նման բնանկարի, խտացված՝ գրողների ու պոետների գեղեցիկի իդեալներով: Իրականում շատերն առաջին անգամ Չանչժոուն բացահայտում են ծավվող հովիտների միջոցով, ինչը կանխորոշում է նրա խտացված «ծավված» քաղաք լինելը: Թեւեւ այն աճում է մասշտաբով ու բնակչությամբ, սակայն լոկ կեսգիշերից հետո է, որ Վեցերորդ այգու եւ Նենշան ճանապարհի մոտ գտնող լճի դիմացի տարածքը լուսավորվում է, եւ կյանքը եռում է: Ի տարբերություն Դեդին լեռան՝ Արեւմտյան լճի գեղեցկությունը հենվում է մշակութային ռոմանսի ու գրական վկայակոչման վրա: Սա նախասահմանում է, որ նրա հռչակը տեղայնացված է միայն Չին աշխարհում եւ նրա հարեւանությամբ գտնվող այն վայրերում, որտեղ առկա է չինական մշակույթի ազդեցությունը: Մինչեւ որ մի օր Չանչժոուն հյուրընկալեց միջազգային պոետիայի փառատոն՝ հրավիրելով աշխարհի լավագույն բանաստեղծներին որպէս հյուրեր, եւ գրական հսկաներից մեկն այսպիսի մի բան է ասում. «Նա, ով հոգնել է Չանչժոուից, հոգնել է կյանքից»:

Պահ եկավ, երբ զգացի, որ ժամանակի ընթացքում հեռանում ու կարծես օտարանում եմ Չանչժոուից: Նրա բարբառը, որը հազար տարվա ընթացքում մնացել է անփոփոխ, հնչում է ասես ձկների թագավորության մայրենի լեզու, եւ այն միշտ վանում է ինձ: Ապրե-

## ՔԱՅ ՏՅԱԼՍԻՆ

Լով Բառշի բլրի հյուսիսային մասում, Արեւմտյան լիճը թվում է ասես ձեռքի դարձերես՝ Բաիդի մայրուղով ու Սուդի մայրուղով, աղմկոտ անցորդներին մատնանշելով իր երակները: Ժամանակի ընթացքում ես ինքս դարձա Յանչժուուի զբոսաշրջիկներից մեկը: Միայն այսպես ես կարող եմ վերարտահայտել իմ տեսակետը: Անցած հարյուրամյակի վերջին, ամառային մի օր ես գտա ավելի վերացական արտահայտություն Արեւմտյան լճի համար:

### **Լիճը**

1

*Պայծառ ջինջ մակերեսից վեր  
ծիծեռնակը թռչում է արբեցած*

*այս փոքրիկ լճակում  
նա ասես մարտական ինքնաթիռ լինի*

2

*Մի վտիտ ծերուկ  
երկու թիակներ է տարուբերում*

*թաց իրանը  
մակերեսին ճեղքվում է*

3

*Լիճն արտացոլում է լեռները  
մուգ կանաչ ալիքների տակ*

*հավանաբար այնտեղ արեւադարձային անտառ է  
խշշում*

*որը հսկում են որսորդներն ու ձկները*

4

*Նվաղ զով զեփյուռը  
վետվետում է լճի մակերեսին  
լիճն ունի բազում հոփսեր  
նա միայն թվում է անտարբեր*

5

*Մարդիկ լողում են ջրից դեպի ափ  
դենքը նրանց նման է ձկան թեփուկի*

*արեւի լույսը խիտ ճյուղերով ծածկված  
կտրում է հանց շեղք*

6

*Մութը թաքցնում է մեզ  
ինչ-որ մեկը թաքնվում է քարի ետևում*

*Նրա ձայնը դեռ  
արծափանքվում է*

Հավանաբար սա Արեւնոյան լճի իմ իդեալն է, մի բան, որը երկար ժամանակ խմորվում էր իմ մեջ: Այն կարող է դիտվել որպէս հանրային բնապատկեր, որը հինգ մատիս պէս միշտ ինձ հետ է, անկախ նրանից՝ ես Փարիզում նստարանին նստա՞ծ եմ, թե՛ Լոնդոնում կամ Նյու Յորքում կամ Հարավային Ամերիկայի ջունգլիներում, Ավստրալիայում կամ Աֆրիկայում:

*Հանչժողու, 21 օգոստոսի 2002թ.*

*Անլերեն թարմանությունը՝  
Ռոբերտ Բեռլիդի եւ Հուան Ջիաջուի*

## ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍՆԵՐՆ ՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ

Այս աշխարհում մաթեմատիկոսներն ու բանաստեղծները գոյատևում են՝ ինչպես անբացատրելի մարգարեներ: Նրանց տարբերությունը կայանում է նրանում, որ բանաստեղծները, շատերի կարծիքով, գոռոզ են, քանի որ նրանք հակված են լինել հպարտ եւ իրենց էությանը միայնակ են, մինչդեռ կարծիք կա, որ մաթեմատիկոսները անմատչելի են, որովհետեւ նրանք գոյատևում են տրանսցենդենտ հարթության վրա: Այսպես, գրական շրջանակներում հաճախ համարում են, որ բանաստեղծները սոցիալապես ստորադասվում են նովելագիրներից, այնպես, ինչպես մաթեմատիկոսներն են սոցիալապես ստորադասվում ֆիզիկոսներից գիտական եւ տեխնոլոգիական ասոցիացիաներում: Բայց այս ամենը լուրջ սնահավատություն է:

«Ես ձախողված բանաստեղծ եմ», - համեստորեն ասել է նովելագիր Վիլյամ Ֆոլքները իր վերջին տարիներից: «Հավանաբար յուրաքանչյուր նովելագիր սկզբում ցանկանում է բանաստեղծություն գրել, ապա գտնում է, որ չի կարող, եւ ապա փորձում է կարճ պատմվածք գրել, որը ամենապահանջված ձեւն է պոեզիայից հետո: Եւ եթե դա նրան չի հաջողվում, միայն դրանից հետո նա հանձն է առնում նովել գրել»: Ֆիզիկոսները, ի համեմատություն, այդքան համեստ չեն: Այնուամենայնիվ, ֆիզիկոսի համար ֆիզիկայի գիտության մեջ ցանկացած աճ մշտապես ուղեկցվում է երկու տարբերակով՝ մաթեմատիկական ինտուիցիայով եւ փորձապաշտական դիտարկմամբ: Ֆիզիկայի արվեստը պետք է նախագծի փորձեր՝ բնության օրենքները արտածելու համար: Այս գործընթացի ժամանակ անհ-

րաժեշտ է մաթեմատիկական ինտուիցիա: Իրականում մաթեմատիկոսների համար հեշտ է ուղղությունը փոխել եւ ֆիզիկա, հաշվողական տեխնիկա կամ տնտեսագիտություն ուսումնասիրել, այնպես, ինչպես բանաստեղծները կսկսեն գրել վեպեր, էսսեներ կամ պիեսներ:

Մաթեմատիկան սովորաբար դիտվում է որպես պոեզիայի կատարյալ հակադրություն, եւ թեւս այդ կազուսը մշտական չէ, այնուհանդերձ, ոչ ոք չի կարող ժխտել դա: Մաթեմատիկոսները աշխատում են հայտնաբերելու համար, մինչդեռ բանաստեղծները աշխատում են ստեղծելու համար: Նկարիչ Դեգանը պատահմամբ գրեց սոնետներ եւ մի անգամ բողոքեց բանաստեղծ Մալարմեին: Նա ասաց, որ նա բազմաթիվ գաղափարներ ունի, որոնք իրականում չափազանց շատ են, եւ նա դժվարանում է գրի առնել: Մալարմեն պատասխանել է. «Բանաստեղծությունները ստեղծվում են ոչ թե գաղափարներով, այլ՝ բառերով: Մյուս կողմից՝ մաթեմատիկոսները, հատկապես հանրահաշվագետները, գլխավորապես աշխատում են հասկացություններով՝ զուգակցելով նմանատիպ կոնցեպտներ: Այլ կերպ ասած, մաթեմատիկոսներն ունեն վերացական մտածողություն, մինչդեռ բանաստեղծները կոնկրետ են մտածում: Սակայն կրկին միշտ չէ այդպես:

Թե՛ մաթեմատիկան, թե՛ պոեզիան՝ երկուսն էլ երեւակայության արդյունք են համարվում: Իսկական մաթեմատիկոսի համար իր նյութերն ասես քուղավոր աշխատանք լինեն, տերեւներ ծառի վրա, հողակտոր կամ լույս ու ստվեր մարդու դեմքին: Այլ խոսքով՝ «ներշնչանք», /Պլատոնը այն կոչեց իբրեւ «բանաստեղծների մոլուցք»/, որը նույնչափ կարելի է մաթեմատիկոսների համար: Օրինակ՝ Գյոթեն երեւակայեց, որ ինքը տեսել է լուսի առկայծում, երբ նա լսել է Երուսաղեմի իր ընկերոջ ինքնասպանության լուրը: Նա վայրկենապես

ուրվագծել է «Երիտասարդ Վերթերի տառապանքների» ուրվապատկերը: Նա վերհիշել է, որ ինքը «կարծես գիրքը գրել է անգիտակցաբար»: Այլ օրինակ. Գաուսը՝ «մաթեմատիկայի արքայազնը», խնդիրը լուծելուց հետո (Գաուսյան գումարման սիմվոլները, որը նրան անհանգստացնում էր երկար տարիներ), ընկերոջը գրել է. «Վերջապես, երկու օր առաջ դա ինձ հաջողվեց. ոչ թե իմ քրտնաջան ջանքերի շնորհիվ, այլ՝ Աստվածատուր շնորհի»: Կայծակի հանկարծակի բռնկման նման հանելուկը լուծվեց: «Ես անկարող եմ ասել հաղորդակցական ինչ թել էր, որը կապեց, ինչը ես նախկինում գիտեի, այն բանի հետ, որն իմ հաջողությունը հնարավոր դարձրեց»:

Հաճախ թվում է, թե մաթեմատիկան փոխազդում է աստղագիտության, ֆիզիկայի եւ բնական գիտությունների այլ ճյուղերի վրա, բայց այն լիովին ինքնագիտակից եւ անվերջ գիտելիքի դաշտ է՝ իրականում ավելի տեւական, քան մյուս գիտությունները: Այն նման է ճշգրիտ լեզվի, որը ոչ միայն գրառում եւ արտահայտում է գաղափարներ եւ մտածական գործընթաց, այլ նաեւ կերտում է իրեն բանաստեղծների ու գրողների միջոցով: Կարելի է ասել, որ մաթեմատիկան եւ պոեզիան մարդկային ամենաազատ ինտելեկտուալ գործունեություններն են: Հունգարացի մաթեմատիկոս Պոլ Թուրանը հաստատեց, որ «մեր մաթեմատիկան ուժեղ ամրոց է»: Նրա խոսքերը համընկան Ֆոլկների տեսակետին. «Մարդիկ չեն բնաջնջվի այնքան ժամանակ, քանի դեռ նրանք ձգտում են ազատության»:

Ուսման եւ պրակտիկայի տարիների ընթացքում ես եկել եմ այն եզրահանգման, որ մաթեմատիկայի հետազոտման գործընթացը փոքրիշատե բանականության մարզում է: Հավանաբար սա մեծ հմայքի հիմնական պատճառներից մեկն է: Ես լավ եմ հասկանում փի-

լիսովհան Ջորջ Սանտայանայի՝ կյանքի վերջին տարիներին ասածը. «Եթե իմ ուսուցիչները ինձ ասեին, որ մաթեմատիկան զուտ խաղ է նախադրյալներով եւ ամբողջովին գտնվում է օդում, միգուցե ես լավ մաթեմատիկոս դառնայի, քանի որ այդ ոլորտն ինձ համար շատ հոգեհարազատ է»: Իհարկե, չեմ կարող բացառել, որ մեծ մտածողները գուցե զիջում են իրենց ժամանակի ինտելեկտուալ նորաձեւությանը, ինչպես կինը կարող է նորաձեւ լինել իր զգեստներով:

Համեմատած այլ առարկաների հետ, մաթեմատիկան երիտասարդի համար նախաձեռնություն է: Այդ ասպարեզի շքանշանները, ամենահայտնի մաթեմատիկական մրցանակները շնորհվել են միայն մինչեւ քառասուն տարեկան մաթեմատիկոսներին. Ռիմանը մահացել է քառասուն տարեկանում, Պասկալը՝ երեսունինը, Ռամանուջանը՝ երեսուներեք, Գոթհոլդ Էյզենշտեյնը՝ քսանինը տարեկանում, Աբելը՝ քսանյոթ, Գալոիսը՝ քսան: Նրանք հասցրել էին այդ կարճ ժամանակում հայտնի լինել որպես հանճարեղ մաթեմատիկոսներ: Որոշ մաթեմատիկոսներ, ինչպես Գաուսը եւ Նյուտոնը, երկար են ապրել, սակայն նրանք իրենց գլխավոր աշխատանքները կատարել են երիտասարդ տարիքում: Նմանապես, մենք կարող ենք բանաստեղծների, որոնք կարճ կյանք են ունեցել, ցուցակ կազմել՝ Պուշկինը, Լորկան եւ Ապոլլիները մահացել են երեսունութ տարեկան հասակում, Ռեմբրն՝ երեսունյոթ, Վայլը՝ երեսունչորս, Մայակովսկին՝ երեսուներկու, Փլասը՝ երեսունմեկում, Շելլին ու Եսենինը՝ երեսունում, Նովալիսը՝ քսանինը տարեկանում, Քիթսը եւ Պետոֆին՝՝ քսանվեցում, իսկ Լոտրեամոնը՝ քսանչորս տարեկանում: Մինչդեռ եթե մենք հայացք ձգենք գեղանկարչությանը, ապա կտեսնենք, որ Գոգենը, Ռուսսոն, Կանդինսկին իրենց պրոֆեսիոնալ կարիե-

րան սկսել են երեսուն տարեկանից հետո: Ուստի ես համոզված եմ, որ մյուս գիտական ու դերասանական առարկաներից առավել, մաթեմատիկայում ու պոեզիայում տաղանդը գլխավոր գրավականն է: Դրանց տարբերությունը կայանում է նրանում, որ բանաստեղծները քանդում են այն ամենը, ինչը ստեղծել են իրենց նախորդները, մինչդեռ մաթեմատիկոսները ստիպված են նախորդ սերնդի ձեռքբերումների վրա ավելացնել: Դա է պատճառը, որ բանաստեղծները կարող են ավելի հեշտությամբ ասպարեզ գալ կամ անհետանալ, քան մաթեմատիկոսները: Բանաստեղծի լեզուն համբավ է վայելում իր ամփոփության շնորհիվ: Էզրա Փաունդին գովաբանում են որպես լակոնիկ ոճի վարպետ. դրանում նա անգերազանցելի է: Սակայն մաթեմատիկոսի լեզուն նաեւ հայտնի է իր հակիրճությամբ: Բրիտանացի գրող Ջերոմ Կ. Ջերոմը հետելյալ օրինակն է բերել.

*Երբ քսաներորդ դարում երիտասարդ տղան սիրահարվում էր, նա երեք քայլ ետ չէր օճում` նայելով աղջկա աչքերի մեջ ու նրան ասելով, որ ինքը չափազանց օեղեցիկ է ապրելու համար: Եւ եթե նա դուրս օալիս հանդիպեր մի այլ երիտասարդի ու ջարդեր նրա օլուխը, դա կապացուցեր, որ նրա` առաջին երիտասարդի ընկերուհին, օեղեցիկ աղջիկ է: Իսկ եթե մյուս երիտասարդը կոտորեր նրա օլուխը, ոչ իր սեփական, այլ` մյուս երիտասարդի, դա կնշանակի...*

Ինչպես նա շարունակում էր ասել, այդ անվերջ պարբերությունը ավելի հակիրճ կլիներ, եթե արտահայտված լիներ մաթեմատիկական սիմվոլներով.

Եթե Ա-ն ջարդել է Բ-ի գլուխը, ուրեմն Ա-ի ընկերուհին գեղեցիկ աղջիկ էր, իսկ եթե Բ-ն է ջարդել Ա-ի գլուխը, ապա Ա-ի ընկերուհին գեղեցիկ չէր, այլ` Բ-ի ընկերուհին էր գեղեցիկ:



Ոչ միայն դա, մաթեմատիկոսների լեզուն ունիվերսալ է: Գյոթեն կատակում էր, որ մաթեմատիկոսները ֆրանսիացիների նման են, նրանք կարող են ձեր ասածը թարգմանել իրենց սեփական լեզվով եւ իսկույն դարձնել այն միանգամայն նոր բան: Ըստ Մարքսի՝ գիտության ճյուղը զարգանում է միայն այն ժամանակ, երբ կիրառելի է մաթեմատիկայում: Նմանապես պոեզիան համարվում է բոլոր արվեստների առանցքային գործոնը: Կարելի է ասել, որ արվեստի բոլոր գործերը կարիք ունեն «բանաստեղծական համեմունքի»: Մոցարտը հեղինակություն էր վայելում՝ որպես «երաժշտության պոետ», իսկ Շոպենը՝ «դաշնամուրի պոետ»: Դժվար չէ պատկերացնել գիտական թերթում ապշեցուցիչ սիմետրիա գեղեցիկ մաթեմատիկական ֆորմուլաների միջեւ եւ մի քանի հոյակապ բանաստեղծական տողեր էսսեի կամ ինչ-որ ելույթի մեջ:

Այժմ վերադառնանք էսսեի սկզբում շարադրված առաջարկությանը: Ֆրոյդը ասել է. «Ուր որ գնում են, ինձ թվում է, թե ինձնից առաջ այնտեղ բանաստեղծ է եղել»: Այս դիտողությունը արվել է Բրետոնի՝ սյուրռեալիզմի ղեկավարի կողմից՝ որպես ոսկե կանոն: Նովալիսը հաստատել է. «Պոեզիան իր կարելիությանը շատ նման է մարգարեությանը»: Ընդհանրապես բանաստեղծությունները նման են մարգարեական ներըմբռնումների: Բանաստեղծ-մարգարեները բացահայտում են զարմանահրաշ եւ տարօրինակ աշխարհի գաղտնիքները մոգական տողերով եւ պատկերներով: Ուստի կայացած բանաստեղծը անխուսափելիորեն կընդդիմանա իշխող դասակարգի հետաքրքրություններին: Պլատոնը մեղադրում էր բանաստեղծներին՝ համարելով նրանց իրականության թշնամիներ, իսկ նրանց բանաստեղծությունները՝ մտավոր թույն սփռելու աղբյուր<sup>2</sup>: Մյուս կողմից՝ զուտ մաթեմատիկան,

հատկապես ժամանակակից, հաճախ զարգանում է իր ժամանակից առաջ, անգամ տեսական ֆիզիկայից առաջ: Ավելի քան մեկ դար անց՝ Գալիլիսի «խմբերի տեսության» ու Չամիլտոնի «քառանդամների տեսության» գյուտերը կիրառվեցին քվանտային մեխանիկայում: Նման ձեռով անէվկլիդեսյան երկրաչափությունը օգտագործվում էր՝ նկարագրելու գրավիտացիոն դաշտը, իսկ կոմպլեքս անալիզները՝ էլեկտրադինամիկան նկարագրելու համար: Կոնիկական մասի հայտնագործությունը, որ ավելի քան երկու հազար տարի համարվել է ոչ ավել, քան «ընչասիրական ուղեղի անշահավետ զվարճանք», վերջապես կիրառվեց ժամանակակից աստղագիտության, արկի շարժման տեսության եւ տիեզերական ձգողականության օրենքներում:

Ինչեւէ, ավելի հաճախ, թե ոչ, մաթեմատիկոսների կատարած աշխատանքը չի հասկացվում: Որոշ մարդիկ կշտամբում են նրանց անհմաստ ենթադրություններով հղփանալու կամ հիմար ու անօգուտ երազողներ լինելու մեջ: Ափսոս, որ որոշ ուժեր հակադրվում են այս ուսյալ գիտնականների տեսակետներին: Սբ. Ավգուստինը դատապարտեց Յոներոսի հորինվածքները, անվանելով դրանք մարդկանց մտքի այլասերում, «մարդկայինի վերագրում աստվածայինին»: «Մենք ընտրություն չունենք, բացի պոեզիայի կեղծ արահետի վրա մոլորվելուց», - ասել էր նա: Միլենոյն ժամանակ, նա ծաղրել է. «Լավ քրիստոնյաները պետք է զգուշանան մաթեմատիկոսներից եւ նրանցից, ովքեր դատարկ մարգարեություններ են անում: Արդեն կա վտանգ, որ մաթեմատիկոսները սատանայի հետ համաձայնության են եկել՝ հոգիները մթնեցնելու եւ մարդուն դժոխքի հետ սերտորեն կապելու մեջ»: Եւ հռոմեական օրենսգետները չէի՞ն կառավարում «չարագործների, մաթեմատիկոսներին եւ նմաններին...», որ

«Երկրաչափական արվեստ սովորելու եւ հանրային վարժանքներին մասնակցելու համար արվեստն այնքան անիծված է, ինչքան մաթեմատիկան՝ արգելված»։ Ականավոր փիլիսոփա Շոպենհաուերը ներկայացրել է պոեզիան որպես բարձրագույն արվեստ, իսկ հանրահաշիվը՝ հոգու ամենացածր գործունեությունը<sup>3</sup>։

Քսաներորդ դարասկզբին մարդիկ ավելի ու ավելի շատ սկսեցին գիտակցել, թե ինչպես էին հին ժամանակներում մաթեմատիկայից օգուտ քաղում, գոնե Ավգուստինի նման ուժերն այլեւս այնտեղ չէին մեզ նեղելու համար։ Ինչ-որ չափով, ինչեւէ, բանաստեղծներն ու արվեստագետները դեռ այն վիճակում են, ինչ վիճակում եղել են նախկինում։ Հավանաբար նրանք պետք է իրենց սփոփեն Պիկասոյի խոսքերով. «Մարդիկ արվեստագետի կոչում են վաստակում միայն անթիվ արգելքներ հաղթահարելուց հետո։ Ուստի, արվեստը պետք է սահմանափակ լինի, այլ՝ ոչ ընդլայնված»։

Ջուզադիպոյամբ, մաթեմատիկոսներն ու բանաստեղծները հաճախ քայլում են կողք-կողքի՝ մարդկային քաղաքակրթության սահմաններով։ Գրեթե նույն ժամանակահատվածում գրվեցին Էուսլիդի «Տարրերը» եւ Արիստոտելի «Բանաստեղծությունները», հին Հունաստանի երկու կարեւորագույն ակադեմիկական աշխատություններ, որոնց հիմքում ընկած էր եռաչափ տիրույթի(3-D) ընդօրինակումը։ Տարբերությունն այն է, որ առաջինը վերացական իմիտացիա էր, իսկ երկրորդը՝ որոշակի։ Էդգար Ալլան Պոն եւ Բոդլերը ժամանակակից արվեստի ռահվիրաներ Լոբաչևսկու եւ Բոյայի՝ անեվկլիդյան երկրաչափության հիմնադիրների հասակակիցներն էին։ Երբ տաղանդաշատ բանաստեղծների ու նկարիչների մի խումբ հավաքվեց Փարիզում, 1930-1940թթ. սյուրռեալիզմի արմատական հեղափոխություն սկսելու համար, աշխարհի մի շարք

փայլուն մտքի տեր մարդիկ իրենց ուրույն ձեռով, ջանասիրաբար աշխատում էին տոպոլոգիա զարգացնելու ուղղությամբ (մաթեմատիկայում դինամիկ զարգացող մի ճյուղ): Այստեղ ես ցանկանում եմ մեջբերել մի օրինակ, մի պատմություն, որը հաճախ տոպոլոգիստները մեջբերում էին ամերիկացի բանաստեղծ Լոնգֆելտի «Հայավաթը» երգից (գրված՝ 1855թ., Դվորժակը գրեց իր իներորդ սիմֆոնիան՝ «Նոր աշխարհը» ներշնչված այս ստեղծագործությամբ): Պատմությունը մի հնդկացու մասին է, ով մորթե ձեռնոցներ էր պատրաստում:

*Նա ներսում տաք կողմ ստանալու համար ներսի կողմը (կաշվի կողմը) դարձնում է դրսի: Նա սառը մասը դրսի կողմում դնելու համար՝ տաք կողմը (մորթու մասը) դնում է ներսում...*

Յնդկացին, փաստորեն, կատարում էր տոպոլոգիական տեղաշարժ, երբ ձեռնոցը ներսից դուրս ել դրսից ներս էր շրջում: Յետաքրքրորեն, տոպոլոգիա բառը առաջին անգամ որպես Տոպոլոգիա երեւան եկավ Գերմանիայում՝ 1847թ., Գաուսի մի ուսանողի աշխատանքում, երբ այդ գաղափարը հայտնի էր միայն մի քանի մաթեմատիկոսների:

Ի վերջո, ես պատրաստվում եմ բարձրացնել այն հարցը, թե արդյո՞ք ինչ-որ մեկը կարող է լինել միաժամանակ եւ՛ բանաստեղծ, եւ՛ մաթեմատիկոս: Պասկալը հավաստիացնում էր մեզ իր Պենսիսի («մտածողություն») երեւան գալու մասին. «Քանի դեռ երկրաչափագետները շատ խորաթափանց են, նրանք կարող են դյուրազգաց լինել. քանի դեռ դյուրազգաց մարդիկ կարող են իրենց խորաթափանցությունը կիրառել երկրաչափական սկզբունքներում, նրանք նույնպես կարող են երկրաչափագետներ լինել»: Չնայած, պատմականորեն միայն 18-րդ դարի իտալացի մաթեմատիկոս

Մասկերոնին եւ 19-րդ դարի ֆրանսիացի մաթեմատիկոս Կոշին, ամենայն հավանականությամբ, կարող են համարվել բանաստեղծներ, մինչդեռ 20-րդ դարի չիլիացի բանաստեղծ Պարրան մաթեմատիկայի պրոֆեսոր էր: Հավանաբար միակը մարդկության պատմության մեջ, ով այդ երկու բնագավառում մեծ ներդրում ունեցավ, Օմար Խայամն էր՝ 11-րդ դարի պարսիկ բանաստեղծը, ով չորս դար շուտ էր ծնվել բազմաշնորհ Դա Վինչիից: Նա մաթեմատիկայի պատմության մեջ նշանավորվեց իր քառակուսի հավասարման երկրաչափական լուծմամբ, եւ նա աշխարհին հայտնի դարձավ որպես ռուբայաթի հեղինակ: Երբ տասնչորսամյա Թ.Ս. Էլիոթը 20-րդ դարի վերջին հանդիպեց Էդուարդ Ֆիցջերալդի՝ Ռուբայաթ բառի անգլերեն թարգմանությանը, նա հնայվեց: Նա վերհիշեց աշխարհ մուտք գործած այս փառահեղ բանաստեղծության փայլը եւ գիտակցեց «շլացուցիչ, քաղցր ու ցավագին գույներով» լի տողերը ընթերցելուց հետո, որ նա ցանկանում է բանաստեղծ դառնալ:

*1991թ. մայիս, Հանչժոու*

<sup>1</sup> Հունգարացի բանաստեղծ Պետեֆին 1849թ. ռուս-ավստրիական դաշինքի դեմ ճակատամարտում անհայտացավ: Մինչեւ տասնիններորդ դարի վերջը համարվում էր, որ նա «մահացել է կազակ զինվորների արձակած միզականետից», երբ ռուս հետազոտողները գտան արխիվներում, որ նա իրականում աքսորվել է Սիբիր՝ որպես ռազմագերի եւ 1856թ. մահացել թոքախտից:

<sup>2</sup> Պրն. Պլատոնը միշտ ուներ ստույգ առոգանություն: Իր վերջին աշխատության մեջ նա նկարագրում էր նրանց, ովքեր անտեսում են մաթեմատիկայի կարեւորությունը՝ «խոզաբարո» իդեալների հետապնդման պատճառով:

<sup>3</sup> Շոպենհաուերի այս տեսակետը ամբողջովին հակադրվում է Պլատոնի տեսակետին, ով պնդում էր, թե բանաստեղծներին դուրս կքշի իր անգերազանցելի քաղաքից եւ որ «Աստված երկրաչափագետ է»:

*Ան՝լերեն թարձմանությունը՝  
Ռորերտ Բեռոլդի եւ Գու Եի*



**Կենսագրական  
տեղեկություններ**

**Քայ ՏՅԱՆՍԻՆ**

Չինացի բանաստեղծ, ակնարկագիր, թարգմանիչ, նկարիչ, Չժեցզյան համալսարանի մաթեմատիկայի պրոֆեսոր Քայ Տյանսինը ծնվել է 1963 թվականին՝ Չինաստանի Հուան քաղաքում: Նա սովորել է մաթեմատիկա եւ 1987թ. Շանդուն համալսարանում ստացել դոկտորական աստիճան՝ թվերի տեսության մասին ատենախոսությամբ:

Նա ճանապարհորդել է ավելի քան հարյուր երկիր եւ հրատարակել ավելի քան 30 բանաստեղծական գիրք, որոնք թարգմանվել են շուրջ 20 լեզուներով՝ անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, խորվաթերեն եւ այլն: Նա տպագրել է ինքնակենսագրական հուշեր՝ «Իմ մանկությունը Մաոյի կառավարման ժամանակաշրջանում»: Քայ Տյանսինը թարգմանել ու խմբագրել է մի քանի հատորներ ժամանակակից համաշխարհային պոեզիայից: 1995թ. նա հիմնել է «Ապոլիներ» ամսագիրը, որը համարվում է Չինաստանի ամենահայտնի բանաստեղծական ամսագիրը: Արժանացել է մի շարք ազգային եւ միջազգային մրցանակների իր պոեզիայի եւ արձակ ստեղծագործությունների համար: Տարբեր քաղաքներում ունեցել է տասնյակ լուսանկարչական ցուցահանդեսներ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշխարհի օվկիանոսում.....	6
Արեւի լույսը.....	7
Երբ ամառը նահանջում է դեպի հարավ.....	8
Շրջապտույտ.....	9
Բարձունքից.....	10
Բաժանում.....	11
Բանաստեղծություն ձկան մասին.....	12
Ծառերն ու շները.....	13
Լճի ջուրը.....	14
Ինչպես խնդրել ժամանակին կանգ առնել.....	15
Աշխարհում ապրելու երազանքը.....	16
Բանաստեղծություն.....	18
Ծաղիկ.....	19
Մերկ.....	20
Ստրերիս գետը.....	21
Նստարանը.....	22
Կանաչ քամի.....	23
Լոտոսի լիճը.....	24
Թիվը եւ վարդը.....	25
Գեսքարտես.....	26
Գիշերային նավակը.....	27
Արձագանք.....	28
Թափառում.....	30
Հնադարյան ճանապարհը.....	31
Նիագարա ջրվեժը.....	32
Չենայայի ալիքը.....	33
Արմավենիները.....	34
Պայթյուն.....	35
Էլբրուս լեռը.....	36
Բարակ շիթ.....	37
Ընթերցանություն.....	38

Թռիչք.....	39
Մեծագույն հաճույք.....	40
Հրեշտակի նախաճաշը.....	42
Շոպենի բացակայությունը.....	43
Երգ.....	44
Ամեն ինչ.....	45
Տագնապած ծառերը.....	46
Ծաղկող ոսկորներ.....	47
Փոքր ննջարան.....	48
Կյանքը կեսօրից հետո.....	49
Բազմաձեռն մարմինը.....	50
Ցիրուցան քարերի տարիները.....	51
Թաց լռություն.....	52
Չգվող մարմինը.....	53
Գիշեր.....	54
Մուգ միրգ.....	55
Չուկ.....	56
Լուսնի կամուրջը.....	57
Արդեն շատ ուշ է.....	58
Խաղաղ կյանքի երգը.....	59
Կանաչ արյուն.....	61
Լիճը.....	62
Բառչի բլուրը.....	64
Գեղեցկությունն իմ հայրենի քաղաքում.....	65
Հուշի թեւերը.....	66
Պահմտոցի.....	67
Տրակտորից իջնող գյուղացի աղջիկը.....	68
Հարց.....	69
Հիշողության առկայությունը.....	70
Թռչկոտում.....	71
Ջրի եզրին.....	72
Ժնեւի լիճը.....	73
Հոգի.....	74
Հեղեղ.....	75
Տարբերություն.....	76



Բանաստեղծի սիրտը.....	77
Երկհարկանի շենքը.....	78
Հեռու եւ մոտ.....	79
Ժամանակի գիրքը.....	80
Հեռու տարածություն.....	81
Գերեզմանոց.....	82
Հարավ-հնդկական այգին.....	83
Օկտավի նեղուցը.....	84
Կուսակրոն աշուղ.....	85

### **ԷՍՍԵՆՆԵՐ**

Արեւմտյան լիճը կամ՝ երազանքի հինգ վայրկյանները.....	87
Մաթեմատիկոսներն ու Բանաստեղծները.....	100
Կենսագրական տեղեկություններ.....	110

Քայլ ՏՅԱՆՍԻՆ

# ԽԱՂԱՂ ԿՅԱՆՔԻ ԵՐԳԸ


Բանաստեղծություններ եւ էսսեներ

Թարգմանությունները՝  
Լիլիթ ՂԱԶԱՐՅԱՆԻ

Խմբագիր՝ Զ. Ալեքսանյան  
Սրբագրիչ՝ Թ. Մաթեոսյան  
Էջադրումը՝ Մ. Ավանեսյանի  
Կազմի ձեւավորումը՝ Մ. Դրավյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 7.25 տպ. մամուլ  
Տպաքանակը՝ 800:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում  
ԼՂՀ, Ստեփանակերտ, Զ. Զակոբյան 25



Էլ. հասցե՝ [vogi.nairi@mail.ru](mailto:vogi.nairi@mail.ru)  
Քեռ.: +37497252323

**«ԳեՂarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել**

- «Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից»-  
2010
- Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչունը» - 2011  
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի  
խնդիրները» - 2012
- «Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով,  
Ն.Գումիլյով, Վ.Խոդասեւիչ/ - 2012
- Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012  
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012  
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»-  
2012
- Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»-  
2013
- Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014  
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով,  
Վ.Նեկրասով, Լ.Ռուբինշտեյն/ - 2014
- Յենրիխ Սապգիր. «Ձուգահեռ մարդը» - 2014  
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014  
«Կամուրջների խռովությունը.  
մետամետաֆորիստներ» - 2015
- Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կավվածքը»-  
2015
- Անդրեյ Պլատոնով. «Չեւեմգուր. Գուրը.  
Պատմվածքներ» - 2015
- Արդի ռուսական վերլիբռ (անթոլոգիա) - 2015  
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015  
Ջիդի Մաջիա. «Յրեղեն խոսքեր» - 2015  
Մա Բայ. «Սրտի արձագանքներ» - 2015  
Եվգենի Վոդլազկին. «Լավր» - 2015